


ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՅԵՎ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
1939 ԹՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1939

31 JAN 2018

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՅԵՎ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
1939 ԹՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1939

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

ՔԱՐՁՐԱԳՈՒՑՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԵՄԼՈՒՄ ՏՆՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

1938 թ. մայիսի 17-ին

Ընկերներ՝

Թույլ ամենք առաջարկել գիտության կենացը, նրա ծաղկման կենացը, գիտության մարդկանց կենացը:

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորը չի պարսպվում ժողովրդից, իրեն հեռու չի պահում ժողովրդից, այլ պատրաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին հաղորդելու գիտության բոլոր նվաճումները, վորն սպասարկում է ժողովրդին վոչ թե հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հանույքով: (Մափախառնություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորն իր հին ու ճանաչված ղեկավարներին թույլ չի տալիս ինքնագոհ կերպով պարիակվել գիտության քուրմերի կեղևի մեջ, գիտության մոնոպոլիստների կեղևի մեջ, վորը հասկանում է գիտության յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենագործությունը, վորը գիտության բոլոր դոհները կամավոր կերպով ու հանույքով բաց են անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և նրանց հնարավորություն և տալիս նվաճելու գիտության բարձունքները, վորն ընդունում է, վոր տապալան պատկանում է գիտության յերիտասարդությանը: (Մափախառնություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորի մարդիկ, հասկանալով գիտության մեջ հաստատված տրադիցիաների ուժն ու նշանակությունը և դրանք հմտորեն ոգտագործելով ի շահ գիտության, այնուամենայնիվ չեն ուզում լինել այդ տրա-

Տեխ. խմբագիր՝ Չ. Մարտիրոսյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Յեսայան
Դիպլիտի լրագրի Ն. 2856 Պատվեր № 430, տիրաժ 1000:

Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Յերևան, Տերյան 72



11-284/2գր

գիցիաների ստրուկները, վորն ունի հին տրադիցիաները, նորմա-
ները, դիրքավորումները փշրելու համարձակություն, վճռակա-
նություն, յերբ դրանք դառնում են հնացած, յերբ դրանք ար-
գելակի յեն վերածվում առաջխաղացման համար, և վորը կարո-
ղանում և ստեղծել նոր արագիցիաներ, նոր նորմաներ, նոր դիր-
քավորումներ: (Մափախաբայուններ):

Գիտությունն իր զարգացման մեջ ճանաչում և վոչ պակաս
քաջարի մարդիկ, վորոնք կարողանում եյին փշրել հինը և ստեղ-
ծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդոտներին, հակառակ ամեն
բանի: Գիտության այնպիսի քաջարիներ, ինչպես Գալիլեյը, Դար-
վինը և շատ ուրիշները, հանրաժանութ են: Յես կուզեյի կանգ
առնել գիտության այդպիսի կորիֆեյներից մեկի վրա, վորը մեկ-
նույն ժամանակ հանդիսանում և մեր ժամանակի մեծագույն
մարդը: Յես նկատի ունեմ Լեոնին, մեր ուսուցչին, մեր դաստիա-
րակին: (Մափախաբայուններ): Հիշեցեք 1917 թիվը: Ռուսաս-
տանի հասարակական զարգացման գիտական անալիզի հիման
վրա, միջազգային դրության գիտական անալիզի հիման վրա
Լեոնինն այն ժամանակ յեկավ այն յեզրակացության, վոր գրու-
թյունից միակ յելքը հանդիսանում և սոցիալիզմի հաղթանակը
Ռուսաստանում: Այդ ավելի քան անսպասելի յեզրակացություն
եր այն ժամանակվա գիտության շատ մարդկանց համար: Պլեխա-
նովը, գիտության աչքի ընկնող մարդկանցից մեկը, այն ժամա-
նակ արհամարհանքով եր խոսում Լեոնինի մասին՝ պնդելով, թե
Լեոնինը գտնվում և «գառանցանքի մեջ»: Գիտության այլ, վոչ
պակաս հայտնի մարդիկ պնդում եյին, թե «Լեոնինը խելագար-
վել է», թե նրան հարկավոր և թագցնել վորեւ հեռու տեղ: Այն
ժամանակ Լեոնինի դեմ վոռնում եյին գիտության բոլոր ու ամեն
տեսակ մարդիկ, վորպես մի մարդու, վորը քանդում և գիտու-
թյունը: Բայց Լեոնինը չվախեցավ հոսանքին դեմ գնալուց, քա-
րացածությանը դեմ գնալուց: Յեվ Լեոնինը հաղթեց: (Մափախա-
բայուններ):

Ահա ձեզ գիտության քաջարիի տիպարը, վոր համարձա-
կորեն պայքար և մղում հնացած գիտության դեմ և ճանապարհ
և հարթում նոր գիտության համար:

Այնպես ել և լինում, վոր գիտության ու տեխնիկայի նոր
ուղիներ յերբեմն հարթում են գիտության մեջ վոչ հանրա-
ժանութ մարդիկ, այլ գիտական աշխարհում միանգամայն ան-
հայտ մարդիկ, հասարակ մարդիկ, պրակտիկները, գործի նորա-

բարները: Այստեղ ընդհանուր սեղանի շուրջը նստած են ընկեր-
ներ Ստախանովը և Պապանինը: Մարդիկ, վորոնք գիտական աշ-
խարհում անհայտ են, վորոնք չունեն գիտական աստիճաններ,
իրենց գործի պրակտիկներն են: Բայց մեմ հայտնի չե, վոր Ստա-
խանովն ու ստախանովականները արդյունաբերության ասպա-
րիզում իրենց գործնական աշխատանքում դեն շարտեցին, վոր-
պես հնացած, գոյություն ունեցող այն նորմաները, վորոնք
սահմանվել եյին գիտության ու տեխնիկայի հայտնի մարդկանց
կողմից, և մտցրին նոր նորմաներ, վորոնք համապատասխանում
են իսկական գիտության ու տեխնիկայի պահանջներին: Ո՞ւմ
հայտնի չե, վոր Պապանինն ու պապանինականները դրեյֆող
սառցադաշտի վրա կատարած իրենց գործնական աշխատանքով
անցողակիորեն, առանց հատուկ գծավարության, դեն շարտեցին
Արկտիկայի մասին յեղած հին պատկերացումը վորպես հնացած
և սահմանեցին նորը, վորը համապատասխանում և իսկական
գիտության պահանջներին: Ո՞վ կարող և ժխտել, վոր Ստախա-
նովը և Պապանինը նորարարներ են գիտության մեջ, մեր առա-
ջավոր գիտության մարդիկն են:

Ահա թե ել ինչպիսի «հրաշքներ» են լինում գիտության
մեջ:

Յես խոսեցի գիտության մասին: Բայց լինում և ամեն տե-
սակ գիտություն: Այն գիտությունը, վորի մասին յես խոսեցի,
կոչվում և ԱՌԱՋԱՎՈՐ գիտություն:

Մեր առաջավոր գիտության ծագման կենացը:

Առաջավոր գիտության մարդկանց կենացը:

Լեոնինի և լեոնինիզմի կենացը:

Ստախանովի և ստախանովականների կենացը:

Պապանինի և պապանինականների կենացը: (Մափախաբա-
բայուններ):

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության 121-րդ հոդվածի համաձայն բարձրագույն ուսումնական հաստատություններն իրագործում են ԽՍՀ Միության բոլոր բաղադրյալների կրթության իրավունքը և նպատակ ունեն պատրաստելու առաջավոր գիտությունը և տեխնիկային տեխնիկական, գիտական սոցիալիզմի գիտելիքներով զինված, խորհրդային հայրենիքը պաշտպանելու պատրաստ և կամունիստական հասարակության կառուցման գործին անձնուրացածներն նվիրված կադրեր»:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՖԻԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Յերեվանի Պետական Համալսարանը, վերը միութենական 23 համալսարաններից մեկն է, հանդիսանում է Հայկական ԽՍՀ-ի կենտրոնական և խոշորագույն բարձրագույն ուսումնական հիմնարկը:

Համալսարանը պատրաստում է բարձրորակ մասնագետներ, ստորև բերված մասնագիտությունները գծով.

Ֆ. Ա. Կ Ո Ւ Լ Տ Ե Տ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆիզիկո-մաթեմատիկական

1. Մաթեմատիկա

2. Ֆիզիկա

3. Առարկայաթյուն

2. Ֆիմիական

1. Անոթագիտական և անալիտ. քիմ.

2. Որգանական քիմիա

3. Գեոլոգ.-աշխարհագրական

1. Գեոլոգիա

2. Աշխարհագրություն

4. Բիոլոգիական

1. Բուսաբանություն

2. Կենդանաբանություն

5. Ֆիլոլոգիական

1. Հայոց լեզու և գրականություն.

2. Ռուս. լեզու և գրականություն.

3. Արևմտյան լեզու և գրականություն.

6. Պատմության

1. Պատմություն

7. Տնտեսագիտական

1. Սոցիալիստական արդյունաբերության եկոնոմիկան և պլանավորումը

2. Սոց. գյուղատնտեսության եկոնոմիկան և պլանավորումը

3. Խորհրդ. տնտեսի եկոնոմիկա

4. Ֆինանսիս-տնտեսագիտ.

5. Մատիոտիկ-տնտեսագիտ.

8. Իրավաբանական

1. Իրավաբանական գիտություններ

Փակուլտետներն ապահովված են կահավորված լաբորատորիաներով, կաբինետներով, արհեստանոցներով, վորոնք հնարավորություն են տալիս ուսանողներին հմտություն ձեռք բերել իրենց փորձերի ժամանակ և զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքներին մեծ ուժանդակություն են ցույց տալիս ինչպես համալսարանի հարուստ գրա-

գարանը, նույնպես և ուսանողութեան համար բացված ընթերցարանը:

Մասնագիտութեան մեջ խորանալու համար կարեւոր տեղ են գրավում ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկաները: Համալսարանը ապահովված է արտադրական պրակտիկայի վայրերով ՀՍՄՀ-ում, և Միութեան կենտրոններում:

Համալսարանում գոյութիւն ունեն մի շարք ուսանողական գիտական և գրական խմբակներ, գոյութիւն ունեն նաև ինքնագործ խմբակներ (յերգեցիկ, յերաժշտական ու թատերական), ինչպես նաև „Найка“ ֆիզկուլտ կազմակերպութիւն: Համալսարանի մեծ դահլիճում ուսանողութեան համար կազմակերպվում են կինոսեանսներ, համերգներ և այլն:

Շնորհիվ այն հանգամանքի, Վոր համալսարանն ապահովված է բարձրորակ պրոֆեսորա-դասախոսական կազմով, համալսարանին կից կա ասպիրանտուրա, Վորը հանդիսանում է պրոֆեսորա-դասախոսական կադրեր և գիտական կադրեր պատրաստելու հիմնական ձեւերից մեկը:

Ասպիրանտուրա յեն ընդունվում բարձրագույն դպրոց ավարտողներից նրանք, Վորոնք ընդունակութիւններ են հայտնաբերում թե իրենց գիտա-հետազոտական և թե մանկավարժական աշխատանքների մեջ:

Համալսարանն ունի հանրակացարան:



Համալսարանի հանրակացարանի շէնքը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ


Պատմութեան ֆակուլտետը պատրաստում է պատմութեան գիտելիքներից բազմակողմանի կրթութիւն ստացած Վորակյալ կադրեր, գիտական աշխատողներ և դասատուներ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննութիւնները հանձնելուց հետո ձեռք են բերում պատմաբանի կոչում:

Ուսման տեւողութիւնն է 5 տարի: Ուսման 4-րդ և 5-րդ կուրսերում ուսանողներն անցնում են հատուկ կուրսեր և սեմինարներ, հետեյալ ամբիոնների գծով՝

- 1) Հայ ժողովրդի պատմութեան,
- 2) ԽՍՀՄ-ի ժողովրդների պատմութեան,
- 3) Հին աշխարհի պատմութեան,
- 4) Միջին դարերի և նոր պատմութեան:

Պատմութեան ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել հանրապետութեան գիտահետազոտական հաստատութիւններում (Գիտութիւնների Ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմութեան ինստիտուտում, արխիւներում, Պատմութեան թանգարանում, Կուսպատ. ինստիտուտում, Մատենադարանում), Վորպես գիտական աշխատակիցներ, լրիվ միջնակարգ դպրոցներում, Վորպես պատմութեան դասատուներ, իսկ ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ ԲՈՒՀ-երի դասախոսներ:



Համալսարանի ընթերցարանը:


ՖԻԼՈՍՈՓԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ունի յերեք բաժին—ա) հայոց լեզվի և գրականության,
բ) ռուսաց լեզվի և գրականության,
գ) յեվրոպական լեզուների և գրականու-
թյան:

Բոլոր բաժիններում ուսման տեվողությունը հինգ տարի յե:
Հայոց լեզվի և գրականության բաժինը պատրաստում է
հայոց լեզվի և գրականության մասնագետներ:

Ռուսաց լեզվի և գրականության բաժինը պատրաստում է
ռուսաց լեզվի և գրականության մասնագետներ: Դասավանդում
այս բաժնում (բոլոր առարկաներից) տարվում է ռուսերեն լեզվով:

Յեվրոպական լեզուների և գրականության բաժինը պատ-
րաստում է յեվրոպական վորեն լեզվի (անգլերեն, գերմաներեն,



Համալսարանի մեծ դահլիճը.

Ֆրանսերեն, ըստ ընտրության) և յեվրոպական գրականության
մասնագետ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները
հանձնելուց հետո ստանում են ֆիլոլոգի կոչում և կարող են
աշխատել գիտահետազոտական հիմնարկներում, թանգարաննե-

րում, գրադարաններում, զբաղվել գրական աշխատանքներով,
ընդունվել ասպիրանտուրա և դասավանդել լրիվ միջնակարգ դըպ-
րոցներում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատրաստում է՝ դատական և դատախազական ֆրոնտում
աշխատող վորակյալ կադրեր: Եյսպես՝ իրավաբանական ֆակուլ-
տետ ավարտողները կարող են աշխատել ներքոհիշյալ բնագա-
վառներում՝

1. Դատական ապարատում իբրև՝

- ա) Արդժողկոմատի բաժնի վարիչներ,
- բ) Գերագույն դատարանի անդամներ,
- գ) Ժողդատավորներ:

2) Դատախազության ապարատում իբրև՝

- ա) Հանրապետական դատախազության բաժնի դա-
տախազներ,
- բ) Դատախազներ,
- գ) Ժող. քննիչներ:

3. Պետական նոտարիատում՝ իբրև պետական նոտարներ:

4. Պետական արբիտրաժի ապարատում՝ իբրև պետական
արբիտրաժներ:

5. Դատապաշտպանների կոլեգիայում՝ իբրև կոլեգիայի ան-
դամ դատապաշտպաններ:

6. Տնտեսական հիմնարկներում՝ իբրև հիմնարկության իրա-
վախորհրդատուներ:

Փակուլտետում ուսման տեղությունն է 4 տարի և ֆա-
կուլտետին կից կա իրավաբանական կաբինետ:

Փակուլտետի զերազանց ավարտողներին տրվում է առաջ-
նություն ասպիրանտուրայում սովորելու համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ուսման տեվողությունը 4 տարի յե: Ունի չորս բաժին՝
առևտրա-տնտեսագիտական, ֆինանսա-տնտեսագիտական, ժող-
տնտեսաշխատանքի և ժողտնտեսականություն (արդյունաբերու-
թյան և գյուղատնտեսության դժով):

1. Առևտրա-տնտեսագիտական բաժինը պատրաստում է խորհրդային առևտրի բարձրորակ տնտեսագետներ: Ավարտողները կարող են աշխատել Առևտրի ժողկոմատի և Հայկրուպի ցանցում:

2. Ժողովրդական տնտեսություն հաշվառման բաժինը պատրաստում է բարձրորակ տնտեսագետ-վիճակագիրներ սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության գծով:

3. Ֆինանսա-տնտեսագիտական բաժինը պատրաստում է բարձրորակ տնտեսագետ-ֆինանսիստներ: Ավարտողները կարող են աշխատել Ֆինժողկոմատի և Պետական բանկի սխտեմներում:

4. Ժողտնտպլանավորման բաժինը պատրաստում է բարձր մորակերտ տնտեսագետ-պլանավիկներ սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության գծով:

Սոցիալիստական արդյունաբերության գծով ավարտողները կարող են աշխատել՝

Պետպլանում,

Արդյունաբերական ժողկոմատներում,

Քաղաքային պլանբաժիններում,

Խոշոր արդյունաբեր. ձեռնարկների պլանային բաժիններում,

Սոցիալիստական գյուղատնտեսության գծով,

Հող֪ողկոմատի պլանային բաժնում,

Շրջգործկոմների պլանային բյուրոներում, շրջհողբաժիններում,

Մեքենատրակտորային կայաններում և

Խորհրդային տնտեսություններում:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները հանձնելուց հետո ստանում են տնտեսագետի կոչում ըստ մասնագիտություն:

Գերազանցելի դիպլոմով ավարտող ուսանողներն առաջին հերթին են գործուղվում ասպիրանտուրա:

ՖԻԶԻԿՈ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ունի յերեք բաժին՝ ֆիզիկական, մաթեմատիկական և աստղաբաշխական:

Ֆակուլտետը պատրաստում է բարձրորակ ֆիզիկոսներ,

մաթեմատիկոսներ և աստղաբաշխներ: Ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել՝

գիտահետազոտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, վերպես ասպիրանտներ:

Լրիվ միջնակարգ դպրոցներում և տեխնիկումներում, վերպես դասատուներ:

Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի լավագույն ավարտողներն ընդունվում են համալսարանին կից ասպիրանտուրան, վերտեղ նրանք խորանում են իրենց ընտրած մասնագիտության մեջ:



Համալսարանի ելեկտրո-ռադիո լաբորատորիան.

Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի ուսման տեվորությունը հինգ տարի յե:


Ֆակուլտետն ունի ընդհանուր ֆիզիկայի, ոպտիկայի և ելեկտրո-ռադիո-ակուստիկայի լաբորատորիաներ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները հանձնելուց հետո ստանում են՝ մաթեմատիկական բաժնի գծով— մաթեմատիկոսի կոչում, ֆիզիկական բաժնի գծով— ֆիզիկոսի կոչում, իսկ աստղաբաշխական բաժնի գծով— աստղաբաշխի կոչում:

Քիմիական ֆակուլտետը պատրաստում է քիմիկոսի կոչում ստացող բարձրորակ մասնագետներ անորգանական, անալիտիկ և որգանական մասնագիտությունների գծով, ժողովրդատնտեսության զանազան բնագավառների ու մանկավարժական ապարեզի համար:

Մասնագիտացումն սկսվում է 4-րդ կուրսից, ուսման տեվողությունը հինգ տարի յե:

Ֆակուլտետն ավարտողը և քիմիկոսի կոչում ստացողը կարող է աշխատել հանրապետության գիտահետազոտական ինստիտուտներում, գիտահետազոտական հիմնարկներում, արդյունաբերական լաբորատորիաներում, վորպես գիտական աշխատակիցներ, ԲՈՒՀ-երում, վորպես ասիստենտներ, տեխնիկոմներում և լրիվ միջնակարգ դպրոցներում, վորպես դասատուներ: Լավագույն շրջանավարտները պահվում են ասպիրանտուրայում: Ֆակուլտետին կից կան մի շարք սարքավորված քիմիական լաբորատորիաներ:



Համալսարանի քիմիական լաբորատորիան:

Բիոլոգիական ֆակուլտետը պատրաստում է կենդանաբանության և բուսաբանության գծով բարձրորակ մասնագետներ:

Բիոլոգիական ֆակուլտետի լավագույն շրջանավարտներն ընդունվում են համալսարանին կից ասպիրանտուրան:

Շրջանավարտ բիոլոգները կարող են աշխատել ԲՈՒՀ-երում և գիտահետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում, գիտ. կայաններում և լինել դասատուներ լրիվ միջնակարգ դպրոցներում ու տեխնիկոմներում:

Բիոլոգիական ֆակուլտետն ունի սարքավորված ու կահավորված՝

կենդանաբանական,

կենդանիների ֆիզիոլոգիայի,

բույսերի մորֆոլոգիայի ու սիստեմատիկայի և

բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիաներ:



Համալսարանի կենդանաբանական լաբորատորիան:

ՅԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Այս ֆակուլտետն ունի յերկու յերկրաբանական և աշխարհագրական: Առաջինը պատրաստում և բաղմակողմանի կրթություն ստացած գեոլոգներ, յերկրորդը պատրաստում և բարձրորակ ֆիզիկական և տնտեսական աշխարհագրություն մասնագետներ:

Ուսման տեվողությունը յերկու բաժնում՝ 5 տարի:

Ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել միութենական և հանրապետական գիտահետազոտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, լրիվ միջնակարգ դպրոցներում և տեխնիկումներում: Լավագույն շրջանավարտները պահվում են ասպիրանտուրայում:

Ֆակուլտետին կից գոյություն ունեն աշխարհագրական կաբինետ, միներալոգիայի, պեմրոգրաֆիայի և հողագիտական լաբորատորիաներ, ինչպես նաև քարտեզագրական արհեստանոց:



Համալսարանի միներալոգիայի կաբինետում.



Համալսարանի յերգեցիկ խումբը.

11-384/89





Համալսարանի ինքնագործ դրամխմբակը.
(Մուլերի «Տարալուֆի» բեմադրություններից մի տեսարան)։

1939 թվին ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են ԽՍՀ Միություն 17-ից մինչև 35 տարեկան յերկուսեւի քաղաքացիները, վորոնք ունեն լրիվ միջնակարգ կրթություն (տասնամյակի բանֆակի, տեխնիկում, ուսումնարան, մեծահասակների միջնակարգ դպրոց, տասնամյակի ծրագրի ծավալ ունեցող ազմական դպրոցներ), կամ վորոնք եքստերնի կարգով ստացել են միջնակարգ դպրոցի ավարտական վկայական։

Մանրագրում.— ա) Այն անձանց, վորոնք 2-րդ աստիճանի դպրոցը (9-ամյակ), կամ ՌԽՍՖՀ-ի և ԲՍՀ-ի յեռամյա արհեստագիտական դպրոցները՝ 7-ամյակի բազայի վրա ավարտել են մինչև 1935թ., թույլատրվում է մասնակցել ԲՈՒՀ-երի ընդունելության քննություններին միջնակարգ դպրոցներն ավարտողների հետ հավասարապես։

բ) Տեխնիկում, ուսումնարան ավարտածներին թույլատրվում է մասնակցել արտադրությունից կտրված բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին, յեթե միայն նրանք ունեն որենքով սահմանված 3 տարվա արտադրական ստաժ։ Այն անհինք, վորոնք ունեն միջնակարգ բժշկական դպրոցի ծավալով վերջացրած կրթություն և իրենց մասնագիտությունից յերեք տարվա դործնական աշխատանքի ստաժ, ԲՈՒՀ-երն ընդունվում են բնդհանուր հիմունքներով։

Հիշված ստաժը չի պահանջվում այն անձնավորություններից, վորոնք Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թվի սեպտեմբերի 15-ի վորոշման համաձայն մտնում են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 50/0-ի մեջ։

Թերի բարձրագույն կրթություն ունեցողներին թույլատրվում է մասնակցել ընդունելության քննություններին ընդհանուր հիմունքներով, յեթե նրանք ունեն միջնակարգ դպրոցի ավարտական վկայական, սույն հոգվածի համաձայն։

Ուսումնարան ավարտածները համարվում են ԽՍՀՄ-ի այն քաղաքացիները, վորոնք ունեն տեխնիկական, մանկավարժական, գեղարվեստական, յերաժշտական և թատերական ուսումնարանների ավարտական վկայական։

2. Միջնակարգ դպրոց (տասնամյակ) ավարտողները, վորոնք ունեն գերազանցիկ ավարտական վկայական, ինչպես նաև

1939 թ. բանֆակ ավարտածները, վորոնք բոլոր առարկաներից՝ բացի գծագրությունից և նկարչությունից, ունեն «գերազանց» թվանշաններ, բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

Այդ իրավունքը տարածվում է նաև միջնակարգ դպրոցների և քսատների կարգով գերազանց ավարտածների վրա:

3. Այն անձնավորությունները, վորոնք 1939 թ. ավարտել են տեխնիկումը, ուսումնարանը և բոլոր առարկաներից (բացի գծագրությունից, նկարչությունից և ֆիզիկուլտուրայից) ունեն «գերազանց» թվանշան և մտցված են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 50%-ի մեջ և բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնում են իրենց մասնագիտությունների գծով, — ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

Ծանոթություն.— Տասնամյակի, տեխնիկումի, ուսումնարանի և բանֆակի գերազանցիկները, վորոնք առանց ընդունելության քննությունների ԲՈՒՀ-երը մտնելու իրավունք ունեն, շինարարական, ճարտարապետական և գեղարվեստական բարձրագույն դպրոցները կամ ֆակուլտետներն ընդունվելու դեպքում յենթարկվում են ստուգողական քննությունների նկարչությունից և գծագրությունից իսկ յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցներն ընդունվողները յենթարկվում են ստուգողների ըստ մասնագիտությունների:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունները մշտնոգ բոլոր անձինք, բացառությամբ 2-րդ կետում նշվածների, յենթարկվում են ընդունման քննությունների հետևյալ առարկաներից.

ա) Ռուսաց լեզու (գրավոր շարադրություն, քերականություն, գրականություն): Այն բարձրագույն ուսումնական հաստատություններում, վորտեղ դասավանդումը տարվում է այլ լեզուներով, անց է կացվում նաև քննություն այն լեզվից, վորով տեղի յե ունենում դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում:

բ) ԽՍՀՄ-ի ժողովրդների պատմություն և ԽՍՀՄ-ի Մահմանադրություն,

գ) Մաթեմատիկա,

դ) Ֆիզիկա,

յե) Բիմիա,

զ) Վերևե մեկ ոտար լեզվից—անգլերեն, գերմաներեն կամ ֆրանսերեն—ընդունվողի ընտրությամբ:

Գյուղատնտեսական, պատմական և լեզվագրական, իրավաբանական, տնտեսագիտական և աշխարհագրական բարձրագույն ուսումնական հաստատությունները և ֆակուլտետները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների—աշխարհագրությունից:

Շինարարական, ճարտարապետական և գեղարվեստական բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների նկարչությունից և գծագրությունից, իսկ կինեմատոգրաֆիայի, ֆիզիկական կուլտուրայի, յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների ըստ մասնագիտության:

Քննությունները կատարվում են ԽՍՀՄ-ի Ժողովրդական կից՝ Բարձրագույն դպրոցների համամիութենական կոմիտեի հաստատած ծրագրերով:

Գյուղատնտեսության մեխանիզացիայի, ինժեներատնտեսական, անասնաբուժական, ղոռտեխնիկական հիդրոմեխանիկա, անասնաբուժական ԲՈՒՀ-երն ու ֆակուլտետները մտնողները աշխարհագրությունից լրացուցիչ քննության չեն յենթարկվում:

5. Ռուսաց լեզվի և այն լեզվի, վորով տարվում է դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչպես և մաթեմատիկայի քննությունները կատարվում են բավոր և գրավոր, իսկ բոլոր մնացած առարկաներից՝ միայն բանավոր:

Ռուսաց լեզվի և այն լեզվի գնահատականը, վորով տարվում է դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, կատարվում է առանձին՝ գրավոր և բանավոր քննությունների համաձայն և դրվում է յերկու թվանշան:

Մաթեմատիկայի գնահատականը կատարվում է ըստ տված գրավոր և բանավոր քննությունների միացյալ արդյունքների և դրվում է մի հանրագումարային թվանշան:

6. Ընդունելության քննությունները տվող անձանց թվից, այսինքն նրանցից, վորոնք ստացել են «միջակից» վոչ ցածր թվանշան, բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվում են ավելի բարձր թվանշան ստացողները:

Այն անձինք, վորոնք կոնկուրսով չեն ընդունվել այն ֆակուլտետը, վորի համար քննություն են տվել, ընդունվում են

այլ ֆակուլտետ, յեթե կան ազատ տեղեր այդ ֆակուլտետի համար քննություն տված թեկնածուներին ընդունելուց հետո:

Յերկրորդ անգամ քննվել չի թույլատրվում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու վերաբերյալ դիմումները տրվում են հունիսի 20-ից մինչև ոգոստոսի 1-ը:

Դիմումներ կարելի չէ տալ Միություն ամեն մի բարձրագույն ուսումնական հաստատության, անկախ դիմողի ընակատեղից: Դիմումի մեջ պետք է նշված լինի, թե դիմողը, վոր ֆակուլտետն ու մասնագիտությունն է ընտրել: Դիմումները տրվում են բարձրագույն ուսումնական հաստատության գիրեկտորի անունով, կցելով՝

ա) մանրամասն ինքնակենսագրություն,

բ) վկայական միջնակարգ դպրոցն ավարտելու մասին (բակականը),

գ) անձնագիր (ներկայացվում է անձամբ),

դ) յերեք հատ լուսանկար, նկարված առանց գլխարկի, ցանկալի յե 3—4 սանտիմետր չափի, դիմողի ստորագրությամբ յուրաքանչյուրի վրա, հաստատված պետական հիմնարկի կողմից,

յե) տեղեկանք դինվորական գրության մասին (գինապարտների համար):

8. Դիրեկտորին կից և նրա նախագահությամբ (առանց փոխարինելու իրավունքի) կազմակերպվում է ընդունելության հանձնաժողով հետևյալ կազմով՝ գիրեկտորի տեղակալ ուսումնական մասի գծով, ֆակուլտետի ղեկավարները և յերկու պրոֆեսոր: Ընդունելության հանձնաժողովը քննում է ներկայացրած բոլոր դիմումները և կազմում է ընդունելության քննություններին թույլատրած անձանց ցուցակը:

Դիրեկտորն ու ընդունելության հանձնաժողովի անդամները պարտավոր են անձամբ ծանոթանալ յուրաքանչյուր ընդունվողի հետ և անձամբ ստուգել ընդունվողների բոլոր փաստաթղթերը:

Ընդունելության հանձնաժողովի բոլոր փորձաքններն ուժի մեջ են մտնում գիրեկտորի հաստատումից հետո: Դիմումները ստանալու մոմենտից սկսած հինգ որվա ընթացքում գիրեկտորը պարտավոր է հայտնել դիմողին՝ թույլատրվում է արդյոք նրան մասնակցել ընդունելության քննություններին, թե՞ վոչ:

Ընդունելության քննություններին չթույլատրելու մասին բողոքներ կարելի չէ տալ համապատասխան ժողովառաի կամ

գերատեսչության ուսումնական հաստատությունների վարչությունը, կցելով փաստաթղթերը (ինքնակենսագրությունը, ավարտական վկայականի և մերժման պատճառի մասին բարձրագույն ուսումնական հաստատության գիրեկտորի տեղեկացման պատճենները: Ուսումնական հաստատությունների գլխավոր վարչությունը պարտավոր է պատասխանել բողոքին՝ վերջինի ստացվելու մոմենտից վոչ ուշ քան 3 որվա ընթացքում:

9. Ընդունելության քննությունները տեղի յեն ունենում ոգոստոսի 1-ից մինչև 20-ը, իսկ ուսանողների ընդունումը կատարվում է ոգոստոսի 21-ից մինչև 25-ը:

Ծանոթություն.— Այն բարձրագույն ուսումնական հաստատություններում և ֆակուլտետներում, վորտեղ գերազանցիկների դիմումների քանակը գերազանցում է յեղած տեղերի քանակի 50 տոկոսին, գիրեկտորներին թույլատրվում է գերազանցիկների ընդունումը կատարել ոգոստոսի 1-ից մինչև 10-ը, ապահովելով գերազանցիկների համար տեղերի 60 տոկոսը:

10. Ընդունելության քննությունները կատարում են հանձնաժողովները, վորոնց նշանակում է գիրեկտորը:

11. Ամեն մի ընդունելության քննության մասնակցողին հանձնվում է քննական թերթիկ իր լուսանկարով:

12. Ընդունելության քննությունների արդյունքները վորոշվում են առանձին՝ ըստ յուրաքանչյուր առարկայի, գնահատականների (թվանշանների) հետեվյալ կարգի գնահատականներով՝ «գերազանց», «լավ», «միջակ», «անբավարար»:

13. Մինչև ընդունելության քննությունների սկսվելը բարձրագույն ուսումնական հաստատության գիրեկտորը կազմակերպում է բոլոր ընդունվողների բժշկական քննություն:

Բժշկական հանձնաժողովները ղեկավարվում են այն հիվանդությունների ցանկով, վորոնք խանգարում են տվյալ ուսումնական հաստատություն ընդունվելուն: Հիվանդությունների ցանկը հաստատում է ԽՍՀՄ-ի Առողջկոմատը և Բարձրագույն դպրոցների գործերի համամիութենական կոմիտեն:

14. Ընդունելության ստուգման և բժշկական քննության արդյունքները հանձնվում են ընդունող հանձնաժողովին, վորը վորոշում է կայացնում բարձրագույն ուսումնական հաստատություն հաշվեգրելու մասին:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատու-

թյունում կատարվում և դիտարկում միանձնյա պատասխանատվությամբ:

15. Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված և տարվա սկզբին առանց հարգելի պատճառների պարագմունքի չեղած անձինք հանվում են ուսանողների ցուցակից:

16. Բարձրագույն ուսումնական հաստատությունների դիրեկտորներին թույլատրվում և ազատ տեղեր լինելու դեպքում ընդունել այն անձանց, վորոնք հաջող քննություն են տվել այլ բարձրագույն դպրոցում, բայց չեն ընդունվել ազատ տեղ չլինելու կամ թե իրենց առողջության վիճակով տվյալ մասնագիտությունն պահանջներին անհամապատասխան լինելու պատճառով: Ուրիշ բարձրագույն դպրոցում քննություն բռնած անձանց համար դիմումներ (գրավոր կամ հեռագրով) ներկայացնելու վերջին ժամկետը նշանակվում և սեպտեմբերի 5-ը: Նույն ժամկետը սահմանվում և այն գերազանցիկների համար, վորոնք չեն ընդունվել ուրիշ բարձրագույն դպրոց, ազատ տեղեր չլինելու պատճառով:

17. ԲՈՒՀ-ում չընդունվելու առթիվ բողոքներ կարելի չէ տալ մինչև ուսումնական տարվա սկիզբը՝ համապատասխան ժողկոմատի կամ գերատեսչության ուսումնական հաստատությունների վարչությանը, կցելով փաստաթղթեր (ինքնակենսագրություն, վկայականի պատճեն, քննող և ընդունող հանձնաժողովի արձանագրությունների քաղվածքները):

Ուսումնական հաստատությունների գլխավոր վարչությունը պարտավոր և պատասխանել բողոքին վոչ ուշ քան 3 որ հետո բողոքը ստանալու մոմենտից:

18. Քննություններին չթույլատրված և իրենց ցանկությունով չմասնակցած, կամ քննությունները չբռնած անձանց, նույնպես և քննությունները բռնած, սակայն ազատ տեղեր չլինելու կամ առողջական վիճակի պատճառով չընդունված անձանց ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են նրանցից համապատասխան դիմում ստացվելուց կամ ընդունող հանձնաժողովի կողմից մերժելու մասին վորոշում կայացնելուց հետո, վոչ ուշ քան 2 որվա ընթացքում:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Կից Բարձրագույն
Դպրոցների գործերի Համաժողովակա
նախագահի Նախագահ՝ Ս. ԿՈՅՏՆՈՎ

10 մարտի 1939 թ.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԲՎԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հավ գիտենալ ամբողջ և կոտորակային թվերով կատարվող գործողությունները:

2. Թվերի՝ 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, և 9-ի վրա բաժանելիության հատկանիշները: Թվերի վերածումը պարզ բազմապատկիչների, ամենափոքր ընդհանուր բազմապատկիչ և ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելը:

3. Հասարակ կոտորակների վերածումը տասնորդական կոտորակների և ընդհակառակը:

4. Չափերի մետրական սիստեմը:

5. Քանորդական հարաբերություն և քանորդական համեմատություն: Քանորդական համեմատության հիմնական հատկությունը: Մեծությունների ուղիղ և հակադարձ համեմատականությունը: Հասկացողություն միջին թվաբանականի և միջին չեղկաչափականի մասին:

6. Տված թվի տոկոսը գտնելը: Տված տոկոսով թվի գտնելը: Յերկու թվերի տոկոսային հարաբերությունը:

2. ՀԱՆՐԱԿԱՆՈՒՄ

1. Հանրահաշվական սիմվոլների ճշգրիտ ու գիտակցական գտագործումը, հանրահաշվական բանաձևերի ընթերցումը, նրանց կազմումը կոնկրետ առաջադրությունների հիման վրա և թվական արժեքների (նշանակություններ) գտնելը: Գործողությունները կարգը:

2. Հարաբերական թվերի գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը: Թվային առանցք:

3. Հանրահաշվական ամբողջ արտահայտությունները և նրանց հետ կատարվող գործողությունները (ներառյալ նաև բազմադասականների բաժանումը բազմանդամների վրա):

4. Հանրահաշվական արտահայտությունների կրճատ բազմապատկումն ու բաժանումն ըստ հետևյալ բանաձևերի:

$(a+b)^2$; $(a+b)^3$; a^2-b^2 ; a^3+b^3 ; a^n+b^n , յեբբ «ո»-ը ամբողջ է և > 0 :

$(x-a)$ -ի վրա ամբողջ բազմանդամի բաժանելիություն թեո-
րեմը (Բեզույի թեորեմը):

5. Բազմապատկիչների վերլուծելու ամենապարզ դեպքերը.
ա) ընդհանուր բազմապատկիչը փակագծից դուրս բերելը,
բ) կրճատ բազմապատկման բանաձևերից ոգտվելը և

գ) խմբավորումների մեթոդը:

6. Հանրահաշվական կոտորակների ձևափոխումները և գործողությունները նրանց հետ:

7. Հավասարություն յերկու տեսակ՝ նույնություն և հավասարում: Հավասարումների հիմնական հատկությունները: Մեկ անհայտով առաջին աստիճանի հավասարումներ կազմելն ու լուծելը:

8. Յերկու և յերեք անհայտով առաջին աստիճանի հավասարումների սխտեմ կազմելն ու լուծելը: Առաջին աստիճանի հավասարումների սխտեմի հետադոտումը.

ա) գործակիցների հավասարման յեղանակը,

բ) տեղադրման յեղանակը:

9. Անհավասարությունների ընդհանուր հատկությունները: Անհավասարության յերկու տեսակ:

1-ին աստիճանի անհավասարության լուծումը:

10. Հասկացողություն Ֆունկցիայի մասին. փոփոխական և հաստատուն մեծություններ, կախյալ և անկախ փոփոխական մեծություններ:

Հասկացողություն հարթության կետի կոորդինատների մասին: Ուղիղ և հակադարձ համեմատական կապակցության գրաֆիկ պատկերումը: Հավասարումների գրաֆիկը:

$$y=kx+b \quad y=ax^2 \quad y=ax^2+bx+c$$

11. Արտադրյալի, աստիճանի և կոտորակի աստիճան բարձրացնելը:

12. Արմատ հանելը: Ամբողջ թվերից, հասարակ և տասնորդական կոտորակներից քառակուսի արմատ հանելը: Նշանների կանոնն արմատ հանելիս:

0,1, 0,01 և այլն մոտավոր ճշտությամբ արմատ հանելը:

13. Արտադրյալից, կոտորակից և աստիճանից վորեև աստիճան արմատ հանելը:

Հասկացողություն իռացիոնալ թվի մասին:

Գործողություններ արմատների վրա:

Կոտորակները հայտարարի իռացիոնալից աղատելը:

14. Մեկ անհայտով 2-րդ աստիճանի հավասարում կազմելը և լուծելը: Քառակուսի հավասարման գործակիցների և արմատների կապակցությունը: Քառակուսի հավասարման արմատների հետադոտությունը: 2-րդ աստիճանի յեռանդամի վերլուծումը բազմապատկիչների:

15. Յերկքառակուսի (բիկվադրատ) հավասարումներ: Արմատանշանի տակ անհայտ պարունակող հավասարումներ: Բարձր աստիճանի հավասարումներ՝ յերկանդամ, յեռանդամ, վերադարձ՝ 3-րդ և 4-րդ աստիճանի:

2 անհայտով 2-րդ աստիճանի հավասարումների սխտեմներ կազմելը և լուծելը:

16. Կոմպլեքս թվեր և գործողություններ նրանցով: Կոմպլեքս թվի յեռանկյունաչափական ձևը:

17. Թվաբանական պրոգրեսիա: Թվաբանական պրոգրեսիայի վորեև անդամի և նրա անդամների գումարի հաշվումը:

18. Յերկրաչափական պրոգրեսիա: Յերկրաչափական պրոգրեսիայի վորեև անդամի և նրա անդամների գումարի հաշվումը: Անվերջ յերկրաչափական պրոգրեսիա: Անվերջ նվազող յերկրաչափական պրոգրեսիայի անդամների գումարի հաշվումը:

19. Յուցչի հասկացողության ընդհանրացումը, գրո, բացասական և կոտորակային ցուցիչներ ունեցող աստիճան: Գործողություններ ցանկացած ցուցիչներ ունեցող աստիճանների վրա:

20. Հասկացողություն լոգարիթմի մասին: Լոգարիթմները ընդհանուր հատկությունները: Լոգարիթմական Ֆունկցիայի գրաֆիկը:

21. Արտադրյալի, քանորդի, աստիճանի և արմատի լոգարիթմները: Արտահայտություններ լոգարիթմելը: Պոտենցիել: Լոգարիթմների մի սխտեմից մյուսին անցնելու մոդուլը:

22. Տասնորդական լոգարիթմների հատկությունները: Լոգարիթմների աղյուսակների ոգնությունը հաշվելը (4 կամ 5 նիշնոց):

23. Յուզչային և լոգարիթմական հավասարումների լուծելը:
Բարդ տոկոսների հաշվումը:

24. Միացությունների ձևերը՝ կարգավորություններ, տեղափոխություններ և զուգադրություններ: Կարգավորությունների, տեղափոխությունների և զուգադրությունների թվի համար բանաձևերի արտածումը: $C_m^n = C_m^{m-n}$ հավասարության ապացուցումը:

25. $(x+a) \cdot (x+b) \cdot \dots \cdot (x+k) = X^n + S_1 X^{n-1} + \dots$ ֆորմուլայի արտածումը:

Հասկացողություն լիակատար մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդի մասին: Նյութոսի բինոմի բանաձևի արտածումն ամբողջ և զրական ցուցչի համար: Ընդհանուր անգամի բանաձևը:

$(x+a)^m$ -ի վերլուծման անդամների և գործակիցների հատկությունները:

3. Յ ե ռ կ ռ ա չ ա փ ու թ յ ու ն

1. Ուղիղ, ճառագայթ, հատված: Ուղիղ գծի հատվածների գումարն ու տարբերությունը, հասկացողություն անկյան մասին, անկյունների գումարն ու տարբերությունը: Ուղիղ և կից անկյունների հատկությունը: Ուղղաձիգ անկյունների հատկությունը:

2. Յեռանկյունի (ներա միջնագծերը, բարձրությունները և կիսորդները): Յեռանկյունների տեսակները:

3. Հավասարասրունք յեռանկյան հատկությունները:

Յեռանկյունների հավասարության յերեք դեպքերը: Յեռանկյան արտաքին անկյան թեորեմը:

4. Յեռանկյան կողմերի և անկյունների կապակցությունը, ուղղահայաց և թեք գծերի հատկությունը: Ուղղանկյուն յեռանկյունների հավասարությունը:

5. Հասկացողություն կիսերի յերկրաչափական տեղի մասին: Ուղիղի հատվածի միջուղահայացի (միջակետում կանգնեցրած ուղղահայացի) և անկյան կիսորդի հատկությունները:

6. Կառուցման հիմնական խնդիրներ՝

ա) ուղիղի վրա տվյալ կետում կառուցել տված անկյան հավասար անկյուն,

բ) տված անկյունը կիսել,

գ) տված հատվածը կիսել,

դ) ուղիղի վրա տված կետում ուղղահայաց կանգնեցնել,

յե) ուղիղից դուրս տված կետից ուղղահայաց իջեցնել,

զ) կառուցել յեռանկյունի, յերեք տրված են 3 կողմերը, մի կողմը և յերկու անկյունները, յերկու կողմերն ու նրանցով կազմված անկյունը:

7. Զուգահեռ ուղիղներ: Զուգահեռ ուղիղների աքսիոման: Յերկու ուղիղների զուգահեռության պայմանները: Ուղիղից դուրս գտնվող կետից այդ ուղիղին զուգահեռ անցկացնելը:

8. Զուգահեռ և ուղղահայաց կողմեր ունեցող անկյունների հատկությունները:

Յեռանկյան և բազմանկյան անկյունների դումարումը:

9. Զուգահեռագիծ և սեղան: Զուգահեռագծի կողմերի և անկյունների հատկությունները: Զուգահեռագծի, ուղղանկյան, շեղանկյան և քառակուսու անկյունագծերի հատկությունները:

10. Յեռանկյան և սեղանի միջին գծի հատկությունները: Հատվածի բաժանումը մի քանի հավասար մասերի:

11. Շրջագիծ, կենտրոն, տրամագիծ, շառավիղ: Կենտրոնական անկյուններ, աղեղներ և նրանց ձգող լարերը: Շոշափողներ, շոշափման կետից անցկացրած շառավղի հատկությունները: Յեռանկյան մեջ ներգծած շրջանի, նրա շուրջն արտագծած շրջանի կենտրոնը:

12. Կենտրոնական ներգծված, լարով ու շոշափողով կազմված և արտագծած անկյունների չափումը: Արտաքին կետից շրջանագծին շոշափող տանելը:

13. Հասկացողություն համաչափելի և անհամաչափելի հատվածների մասին. համեմատական հատվածներ՝ անկյան կողմերը հատող զուգահեռագծերի հատկությունները. հատվածի բաժանումը տված հատվածներին համեմատական մասերի: Տված յերեք հատվածներին համեմատական 4-րդ հատվածի կառուցումը:

14. Յեռանկյունիների և բազմանկյունիների նմանությունը: Տված յեռանկյան և բազմանկյան նման յեռանկյունի և բազմանկյունի կառուցելը: Յեռանկյունիների նմանության թեորեմները: Յեռանկյան ներքին անկյան կիսորդի հատկության վերաբերյալ թեորեմը:

15. Մետրական հարաբերակցություններն ուղղանկյուն յեռանկյան մեջ: Ուղիղ անկյան գագաթից ներքնաձիգի վրա իջեցրած ուղղահայացի հատկությունը: Պյութագորի թեորեմը: Յեռ-

անկյան սուր և բութ անկյան դիմաց ընկած կողմի քառակուսին:
Համեմատական հատվածները շրջանի մեջ:

$$X = \sqrt{a^2 + b^2}, \quad X = \frac{ab}{c}, \quad X = \frac{a^2}{c}, \quad X = \sqrt{ab} \quad \text{արտահայտու-$$

թյունների կառուցումը:

16. Կանոնավոր բազմանկյունիներ: Կանոնավոր բազմանկյան մեջ և շուրջը ինչպես ներգծել և արտագծել շրջագծի: Կանոնավոր բազմանկյունների նմանութունը և նրանց պարագծերի հարաբերութունը:

17. Ներգծված ու արտագծված կանոնավոր վեցանկյան, քառակուսու և յեռանկյան կողմի արտահայտութունը շրջանի շառավղի միջոցով:

18. Ուղղանկյան, զուգահեռագծի, յեռանկյան, սեղանի և կանոնավոր բազմանկյան մակերեսների չափումը: Յեռանկյան մակերեսի բանաձևը նրա 3 կողմերի միջոցով: Նման յեռանկյունիների և բազմանկյունիների մակերեսների հարաբերության վերաբերյալ թեորեմը:

19. Հասկացողութուն սահմանի մասին: Շրջագծի յերկարութունը վորպես ներգծված և արտագծված կանոնավոր բազմանկյունների պարագծերի սահման, նրանց կողմերի թիվը անվերջ կրկնապատկելու դեպքում: Շրջանագծի յերկարության բանաձևը: Հասկացողութուն π թիվը հաշվելու մասին:

Շրջանի մակերեսը, վորպես ներգծված և արտագծված կանոնավոր բազմանկյունիների մակերեսների սահման:

20. Հարթության ուղղահայաց ուղիղը: Հարթության նկատմամբ ուղիղ գծի ուղղահայաց լինելու պայմանը: Յերեք ուղղահայացների թեորեմը:

21. Ուղիղ գծի ու հարթության և յերկու հարթությունների զուգահեռության պայմանները:

22. Յերկնիստ անկյունները և նրանց գծային անկյունները: Յերկնիստ անկյունները գծայիններով չափելը: Ուղղահայաց հարթություններ: Յերկու հարթությունների ուղղահայացության պայմանը:

23. Ուղիղ գծի և հարթության միջև կազմված անկյունը: Քառանկյուն ուղիղներ և նրանց միջև կազմված անկյունը:

24. Պրիզմաներ, պրիզմայի կողմնային մակերեւութը, զուգահեռանիստ, նրա նիստերի և անկյունագծերի հատկությունները,

նրա անկյունագծի և յերեք չափումների միջև յեղած առնչությունը: Ուղղանկյուն զուգահեռանիստ:

25. Բուրգ: Բուրգի զուգահեռ հատվածները հատկությունները, լրիվ և հատած բուրգի կողմնային մակերեւութը:

26. Պրիզմայի, լրիվ և հատած կոնի ծավալը:

27. Գլանի, կոնի և հատված կոնի կողմնային մակերեւութը և ծավալը:

28. Գունդ, գնդի հատումը հարթությամբ: Գնդի շոշափող հարթությունը: Գնդի մեծ և փոքր շրջանները: Գնդի մակերեւութը: Գնդային գոտու և սեգմենտի մակերեւութը: Գնդի ծավալը: Գնդային սեկտորի ծավալը:

29. Պարզագույն մարմինների պտտման մակերեւութները և ծավալների հաշվումը:

Ա. Յեռանկյունաչափություն

1. Յեռանկյունաչափական ֆունկցիաները՝ վորևե անկյան սինուսը, կոսինուսը, տանգենսը, կոտանգենսը, սեկանսը և կոսեկանսը: 30, 60 և 45 անկյունների ֆունկցիաները:

Յեռանկյունաչափական ֆունկցիաների փոփոխումը կապակցված անկյան 0-ից մինչև 360 փոփոխվելու հետ:

Հասկացողութուն յեռանկյունաչափական ֆունկցիաների պարբերականության մասին:

2. Միևնույն աբզումենտի յեռանկյունաչափական ֆունկցիաների կապակցութունը: Յեռանկյունաչափական ֆունկցիաների սովյալ թվական արժեքին (նշանակության) համապատասխանող անկյան կառուցումը:

Միևնույն սինուս, կոսինուս, տանգենս, կոտանգենս ունեցող անկյունների ընդհանուր ձևը:

3. Դրական և բացասական անկյունները, բացասական արգումենտների յեռանկյունաչափական ֆունկցիաները:

4. Անկյունների չափման յերկու յեղանակը: Ռադիան:

5. Վորևե անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաների վերածումը սուր անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաների:

6. Գումարման թեորեմն ու նրա հետեւյալները՝

$$\sin(a \pm \beta); \cos(a \pm \beta); \operatorname{tg}(a \pm \beta)$$

7. Կրկնակի և կես անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաները:

8. Յեռանկյունաչափական արտահայտությունները լոգարիթ-

մելու համար հարմար տեսքի բերելը: $\sin a + \sin \beta$; $\cos a + \cos \beta$
 $\operatorname{tg} a + \operatorname{tg} \beta$ բանաձևերը:

9. Միևուսի, կոսիւսուսի և տանգենսի գրաֆիկները:

10. Յեռանկյունաչափական հավասարումների լուծումը:

11. Ուղղանկյուն յեռանկյունիների լուծումը:

12. Շեղանկյուն յեռանկյունիների լուծումը: Միևուսների և կոսիւսումների թեորեմները. յեռանկյան մակերեսի վորոշումը նրա յերկու կողմերի և նրանց միջև կազմված անկյան միջոցով: Ներգծված և արտագծված շրջանի շառավղի արտահայտութիւնը:

13. Հասկացողութիւն հակադարձ յեռանկյունաչափական ֆունկցիաների մասին, նրանց գլխավոր նշանակութիւնները:

14. Յեռանկյունաչափութիւն կիրառումը յերկրաչափական խնդիրներ լուծելիս:

Յ Ի Ձ Ի Կ Ա Յ Ի Ծ Ր Ա Գ Ի Բ

1. Մ Ե Խ ա ն Ի կ ա

1. Միևուսն կողմն ուղղված ուժերի գումարումը: Ուժերի գումարումը, յերբ նրանք իրար հետ տնկյուն են կազմում: Ուժի տարաբաղադրումն իրար հետ տնկյուն կազմող դրժող յերկու ուժերի: Թեք հարթութիւն վրա մարմնի հավասարակշռութիւն պայմանները: Միևուսն և հակառակ կողմն ուղղված զուգահեռ ուժերի գումարումը: Մի ուժի վերլուծումը յերկու զուգահեռ ուժերի, ուղղված միևուսն և տարբեր կողմեր: 1-ին և 2-րդ կարգի լծակների հավասարակշռութիւն պայմանները: Պարզ մեքենաներ: Մարմնի ծանրութիւն կենտրոնը: Մեկ կետում ամրացված մարմինների հավասարակշռութիւն տեսակները: Հորիզոնական հարթութիւն վրա հենված մարմինների հավասարակշռութիւն պայմանները:

2. Հավասարաչափ ուղղագիծ շարժում: Արագութիւն: Այդ շարժման հավասարումը: Այդ շարժման ճանապարհի և արագութիւն գրաֆիկը կախված ժամանակից:

Շարժման առաջին որենքը (իներցիայի որենք): Շարժումը հավասարակշռ. ուժերի ազդեցութիւն տակ:

3. Փոփոխական շարժում: Միջին արագութիւն: Արագութիւնը տվյալ մոմենտում: Արագացում: Հավասարաչափ արագացող շարժում առանց սկզբնական արագութիւն: Այդ շարժման արագութիւն և ճանապարհի գրաֆիկը: Արագութիւն բանաձևը՝

$V = at$; $S = \frac{at^2}{2}$ բանաձևի ստացումը միջին արագութիւն հասկա-

ցողութիւն ոգնութիւն և գրաֆիկական ճանապարհով: $V^2 = 2as$ բանաձևի ստացումը: Հավասարաչափ արագացող շարժում սկզբնական արագութիւն: Նախկին բանաձևերից հավասարաչափ զանդադացող շարժման բանաձևի ստացումը: Այդ շարժման արագութիւն գրաֆիկները: Հավասարաչափ փոփոխական շարժման

ընդհանրացած բանաձևերը՝ $S = V_0 t + \frac{at^2}{2}$, $S = V_0 t + \frac{a+2}{2}$

4. Մարմնի կշիռը և մասսան: Ստութիւն: Նյութոնի՝ շարժման 2-րդ որենքը՝ հարաբերութիւնը ուժի, մասսայի և արագացման միջև:

Դին: Ստեն: Ուժերի արտահայտութիւնը կշռային միավորներով: Մեկ գրամ ուժի և գինի կապը: C. G. S. M. T. S. և տեխնիկական սիստեմներ: Հիմնական և ածանցյալ մեծութիւններն այդ սիստեմներում: Մարմինների ազատ անկումը: Ազատ ընկնող մարմնի արագացումը. ողի դիմադրութիւն ազդեցութիւնը:

5. Նյութոնի յերրորդ որենքը՝ ազդման և հակազդման հավասարութիւնը: Ազդման և հակազդման ուժերի կիրառման կետերը:

6. Մեխանիկական աշխատանք: Աշխատանքի բանաձևերը: Եներգիա: Կինետիկ և պոտենցիալ եներգիա: Պոտենցիալ եներգիայի անցնելը՝ կինետիկի և ընդհակառակը: Եներգիայի պահպանման որենքը մեխանիկայում: Հզորութիւն:

7. Տեղափոխումների գումարում և արագութիւնների գումարում: Հորիզոնական ուղղութիւնը նետված մարմինների շարժումը: Այդ շարժման գրաֆիկական մեկնաբանումը:

8. Հավասարաչափ շարժում շրջանագծով: Դժային արագութիւն: Անկյունային արագութիւն: Կենտրոնաձիգ արագացում: Կենտրոնաձիգ արագացման բանաձևի ստացումը: Կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժեր, նրանց կիրառման կետերը: Տեխնիկական որինակներ:

9. Տիեզերական ձգողութիւն որենքը:

10. Առաձգական մարմիններ: Զսպանակավոր կշեռքներ: Դինամոմետրներ:

2. Հիմնական գաղափարներ մոլեկուլային կիմեիկ

Ե Ե Ս Ո Ւ Բ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Նյութի բաժանելիութիւնը: Մոլեկուլներ: Հասկացողութիւն մոլեկուլային ճնշման մասին: Հարակցութիւն: Հեղուկների մակե-

քեզ վույթային թաղանթը: Նրա հատկութիւնները: Մակերեւոյթային լարվածութիւն: Թրջում: Հեղուկի բարձրանալը մաղային անոթներում: Մազականութեան յերեւոյթները բնութեան մեջ և տեխնիկայում: Մոլեկուլների շարժումը: Մոլեկուլային շարժման բնութիւնը գազանման, հեղուկ և պինդ մարմիններում:

3. Հ ե դ ու կ ց ե ռ յ ե վ գ ա գ ե ռ

Տեսակարար ճնշում: Պասկալի որոնքը հեղուկների և գազերի համար: Զրաբաշխման մասնուկի կազմութեան սկզբունքը: Հեղուկի ճնշումը անոթի հատակի և պատերի վրա: Հաղորդակից անոթների որոնքը համասեռ և տարասեռ հեղուկների համար: Մթնոլորտի ճնշումը: Տորիչելլի փորձը: Նորմալ մթնոլորտային ճնշման մեծութիւնը: Տեխնիկական մթնոլորտ: Մոլեկուլային և մետաղային բարոմետր: Արքիմեդի որոնքը հեղուկների և գազերի համար: Պինդ և հեղուկ մարմինների տեսակարար կշռի վորումը Արքիմեդի որոնքի ոգնութեամբ: Հեղուկների մակերեսութիւն վրա մարմինների լողալու պայմանները: Արեոմետրեր: Ողաճնացութեան ֆիզիկական հիմունքները:

Բոյլ-Մարիոտի որոնքը: Այդ որոնքի գրաֆիկը: Հեղուկաւոր մանոմետրեր: Մետաղյա մանոմետրեր: Նոսրացնող, մզող ողային պոմպեր:

4. Զ ե ռ մ ու թ յ ու ն

1. Զերմաչափեր: Յելսիուսի և Ռեոմյուրի շկալաներ:

2. Գծային և ծավալային ընդարձակման գործակիցներ:

3. Զրի ընդարձակման առանձնահատկութիւնները: Ընդարձակման գծային և ծավալային գործակիցների կապակցութիւնը: Մարմնի խտութեան փոփոխութիւնը տաքանալիս: Գազերի ընդարձակումը: Գեյ-Լյուսակի որոնքը:

Միացյալ որոնքի (Բոյլ-Մարիոտ—Գեյ-Լյուսակ) բանաձևը: Գազափար բացարձակ զերոյի մասին: Բացարձակ ջերմային շկալա:

3. Զերմութեան քանակ: Զերմութեան քանակի չափման միավորները:

Մարմինը տաքացնելու համար անհրաժեշտ ջերմութեան քանակը հաշվելու բանաձևը:

Մարմնի տեսակարար ջերմունակութեան վորոշումը փորձանկան ճանապարհով: Զերմաստիճանի վորոշումը կալորիմետրիկ յեղանակով: Վառելանյութի տարբեր տեսակների ջերմարար ունակութիւնը: Տաքացուցչի ոգտակար գործողութեան գործակիցը:

4. Կոնվենցիան գազերի և հեղուկների մեջ: Զրային ջերմացման կազմութեան սկզբունքը: Գազերի, հեղուկների և պինդ մարմինների ջերմահաղորդականութիւնը: Հասկացողութիւն ճառագայթման և ճառագայթակլանման մասին:

5. Հալում: Հալման ջերմութեան վորոշելը փորձական յեղանակով: Մարմինների ծավալի փոփոխութիւնը հալվելիս և պնդանալիս: Հալման կետի կախումը ճնշումից:

6. Գոլորշիացում և խտացում: Յեռում: Յեռման աստիճանի կախումը ճնշումից: Գոլորշիագոյացման ջերմութեան վորոշելը փորձական ճանապարհով: Շողեջեռացման կազմութիւնը:

7. Հեղուկի հագեցած և վոչ հագեցած գոլորշիներ: Նրանց հատկութիւնները: Հագեցած գոլորշու ճնշման կախումը ջերմաստիճանից:

8. Բացարձակ խոնավութիւն: Հարաբերական խոնավութիւն: Խոնավաչափեր:

9. Գազերի հեղուկացումը: Կրիտիկական ջերմաստիճան: Դյուլարի անոթներ:

10. Զերմութեան մեխանիկական համարժեք: Աշխատանքի ջերմային համարժեքը (Կդ—Մ—ի ջոուլ և Երգ—ի համար): Շողեմեքենայի և ներքին ալրման շարժիչների կազմութեան սխեման: Շողեմեքենայի և ներքին ալրման շարժիչի ոգտակար գործողութեան գործակիցը:

5. Ե լ ե կ ս ռ ա կ ա ն ու թ յ ու ն

1. Յերկու տեսակ ելեկտրականութիւն: Ելեկտրական լիցքերի փոխազդեցութիւնը: Կուլոնի որոնքը: Լիցքի բացարձակ և պրակտիկ միավոր (կուլոն): Ելեկտրոսկոպի կազմութիւնը: Ելեկտրականութեան բաշխումը հաղորդչի մակերեւոյթի վրա: Լիցքի հաղորդչին ազդելու միջոցով: Հիմնական պատկերացումներ ելեկտրոնային թեորիայի մասին:

2. Լիցքի ելեկտրական դաշտը: Ընդհանուր գաղափար պոտենցիալի մասին: Պոտենցիալների տարբերութեան միավոր՝ վոլտ: Ելեկտրոտունակութիւն: Ունակութեան միավոր՝ ֆարադ: Հարթ Կոնդենսատոր, նրա կազմութիւնը և նշանակութիւնը:

3. Հոսանքի ուժը: Հոսանքի ուժի միավոր—ամպեր: Պոտենցիալների տարբերությունը հաղորդիչի ծայրերում: Ոհմի որենքը շղթայի մասի համար: Հաղորդիչների դիմադրությունը: Դիմադրության միավոր՝ Ոհմ: Տեսակարար դիմադրություն: Դիմադրությունը հաշվելու բանաձևը:

Դիմադրության կախումը ջերմաստիճանից: Ռեստատաներ:

4. Հաղորդիչների հաջորդական միացում: Հաղորդիչների զուգահեռ միացում:

5. Ոհմի որենքն ամբողջ շղթայի համար: Ելեմենտների հաջորդական և զուգահեռ միացում:

6. Հոսանքի աշխատանքը և հզորությունը: Հոսանքի աշխատանքի և հզորության միավորները՝ վոլտ-կուլոն (Ջուլ), վոլտ-ամպեր (վատտ-ժամ, հեկտովատ-ժամ, կիլովատ-ժամ): Ելեկտրական հոսանքի եներգիան, նրա փոխակերպումն եներգիայի այլ տեսակների: Ջուլ-Լենցի որենքը: Ելեկտրական լամպեր: Ճաքացնող գործիքներ: Ապահովիչներ:

7. Ելեկտրոլիզ: Ֆարադեյի որենքները: Գաղափար ելեկտրոեններգիայի դիսսոցիացիայի մասին: Վոլտի և Դանիելի ելեմենտների կազմության սկզբունքը: Ակումուլյատորների կազմության սկզբունքը: Գալվանոպլաստիկա: Գալվանոստեդիա:

8. Բնական և արհեստական մագնիսներ: Բևեոներ և նրանց փոխադրեցությունը: Մագնիսական ինդուկցիա: Մագնիսական դաշտ: Ուժագծեր: Յերկաթը մագնիսական դաշտում: Մագնիսական պաշտպանությունը: Յերկրի մագնիսականությունը: Ուղիղ հոսանքի մագնիսական դաշտ: Խցանահանի կանոնը: Շրջանային հոսանքի մագնիսական դաշտ: Սոլենոյդի մագնիսական դաշտ: Ելեկտրոմագնիս: Ելեկտրական զանգի և հեռագրի կազմությունը:

Հոսանքների փոխադրեցությունը: Հոսանքատար հաղորդիչի շարժումը մագնիսական դաշտում: Ամպերմետրի և վոլտմետրի կազմությունը: Նրանց միացնելը շղթային:

Ելեկտրոմագնիսական ինդուկցիա: Ինդուկցիայի ելեկտրաշարժ ուժի առաջացումը: Ֆարադեյի փորձը: Լենցի կանոնը: Ինդուկցիայի յենթարկած հոսանքի ուղղությունը: Գալարի պտույտը մագնիսական դաշտում: Ինքնինդուկցիա: Փոփոխական հոսանքի դինամոմեքենայի կազմության սկզբունքը: Ողակներ: Խողանակներ: Հաստատուն հոսանքի դինամոմեքենաների և մոտորների կազմության սկզբունքը: Կոլեկտոր: Դինամոմեքենաների ոգտակար գործողության գործակիցը: Հեռախոս:

10. Տրանսֆորմատորի կազմությունն ու գործողությունը: Տրանսֆորմատորների ոգտակար գործողության գործակիցը: Ելեկտրոեններգիայի հաղորդումը հեռավորության վրա: Ռումկորֆի կոճը:

11. Ելեկտրական հոսանքը գազերում: Կատոդային ճառագայթները, նրանց բնույթը և հատկությունները: Հասկացողությունն ռենտգենյան ճառագայթների հատկությունների և ստանալու յեղանակների մասին:

6. Լ ու յ ա

1. Լույսի աղբյուրները: Թափանցիկ և անթափանցիկ մարմիններ: Լույսի ուղղագիծ տարածումը: Ստվեր և կիսաստվեր: Պարավոլներ: Լույսի արագությունը:

2. Լույսի անդրադարձման որենքները: Պատկերների կառուցումը հարթ հայելու մեջ: Անդրադարձող ճառագայթների ցրումը: Գոգավոր զնդաձև հայելի: Հայելու ֆոկուսը: Գնդաձև հայելու բանաձևի ստացումը: Լուսարձակ:

3. Լույսի բեկման որենքները: Բեկման գործակիցը: Ճառագայթների ընթացքը պրիզմայով և հարթ զուգահեռ թիթեղի միջով: Լրիվ ներքին անդրադարձում: Սահմանային անկյուն:

4. Հավաքող և ցրող լինդեր: Լինդերի բանաձևը առանց արտածման: Պատկերների կառուցումը լինդերի մեջ: Լինդի ոպտիկական ուժը:

5. Պրոեկցիոն ապարատ: Փոտոապարատ: Լուպա: Միկրոսկոպ: Տելեսկոպ: Ճառագայթների ընթացքն այդ գործիքներում: Աչքը վորպես ոպտիկական գործիք: Ակկոմոդացիա: Կարճատեսություն և հեռատեսություն: Ակնոցներ: Կինեմատոգրաֆ:

6. Սպիտակ ճառագայթի տարրալուծումը պրիզմայի ոգնությամբ: Սպեկտր: Գույների խառնումը: Լրացուցիչ գույներ: Սպեկտրոսկոպ: Անտեսանելի ճառագայթներ: Առաքման սպեկտրներ: Կլանման սպեկտրներ: Կիրխհոլի որենքը: Ֆրանսհոֆերյան դժեր: Արևի սպեկտր: Գաղափար սպեկտրային անալիզի մասին:

7. Լուսավորություն: Լուսավորության միավորը: Լույսի աղբյուրի հեռավորությունից և ճառագայթի թեքման անկյունից լուսավորության ունեցած կախման բանաձևերը: Տարբեր աղբյուրների լույսի ուժի համեմատումը: Լույսի ուժի միավորներ: Փոտոմետրեր (լուսաչափեր):

1. Տատանողական շարժումների որինակներ: Տատանման պարբերութիւն: Տատանումների թիւը մեկ վայրկյանում: Տատանման ամպլիտուդը: Մեկ վայրկյանում տեղի ունեցող տատանումների թիւի և պարբերութեան կապակցութիւնը: Տատանումների իզոխորոնիկական (հավասարատեղական) բնույթը: Առանցքի բանաձևը (առանց աչք ստանալու): Առաձգական մարմինների տատանումը: Լայնական և յերկայնական ալիքներ: Տատանումների տարածման արագութիւնը: Ալիքի յերկարութիւնը: Ալիքի յերկարութեան, ալիքների տարածման արագութեան և մեկ վայրկյանում տեղի ունեցող տատանումների թիւի (կամ պարբերութեան) միջև յեղած կապակցութիւնը: Միևնույն պարբերութիւն ունեցող մեկ ուղիղով կատարվող 2 տատանումների գումարումը Ալիքների ինտերֆերենցիան: Կանգուն ալիքներ: Հանգույցներ: Ուռուցքներ:

2. Հնչող մարմնի տատանումները: Ալիքներն ոգում: Ձայնի ուժը: Ձայնի բարձրութիւնը: Ձայնի արագութիւնը: Ձայնի անդրադարձումը: Ձայնական ռեզոնանս: Ռեզոնատորներ: Գրամոֆոն:

3. Գաղափար ելեկտրոմագնիսական տատանումների և ալիքների մասին: Տատանման պարբերութիւնը: Տատանման տարածման արագութիւնը: Ալիքի յերկարութիւնը:

ՔԻՄԻԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՒՀՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Ընդհանուր ցուցմունքներ

1. Քննվողներին պետք է առաջադրվեն հետևյալ պահանջները.

ա) քիմիական հիմնական որենքների և հասկացողութիւնների պարզորոշ յուրացում,

բ) հաստատուն ունակութիւններ քիմիական լեզվի մեջ,

գ) ֆորմուլներով և հավասարումներով քիմիական հաշվումներ կատարելու հաստատուն կարողութիւն,

դ) ծանոթութիւն կարևորագույն տարրերի և նրանց հիմնական միացութիւնների հետ:

2. Հարցաքննման ժամանակ չպետք է խորանալ այնպիսի մանրամասնութիւնների մեջ, վորոնք պահանջում են զուտ մեխանիկական հիշողութիւն: Մասնավորապես քննվողից պետք է պահանջել միայն կարևորագույն թվերը, այն ել կլորացրած: Չպետք է նաև պահանջել զանազան քիմիական ապարատների կառուցվածքի ու գործողութեան, քիմիական մանիպուլյացիաների, ռեակցիաների ընթացքի առանձնահատկութիւնների մանրամասն նկարագրութիւնը և այլն:

Բ. Առհանգնեի ծավալը

1. Քիմիական և ֆիզիկական յերևույթները: Որինակներ, վորոնց հիման վրա կարելի յե ցույց տալ քիմիական յերևույթների տարբերութիւնը ֆիզիկական յերևույթներից: Խառնուրդներ և քիմիական միացութիւններ: Քիմիական ռեակցիաների հիմնական տիպերը՝ միացման, քայքայման, տեղակալման ռեակցիաներ: Որինակներ: Հասկացողութիւն եկզոթերմիկ և էնդոթերմիկ ռեակցիաների մասին: Որինակներ:

2. Տարր: Պարզ նյութ: Ալոտրոպիկ ձևափոխություններ:

Որինակներ, վորոնց հիման վրա կարելի չեցուց տալ «տարր» և «պարզ նյութ» հասկացողությունների տարբերությունը. ալոտրոպիկ ձևափոխումներ սփռող պարզ նյութերի որինակներ: Մետաղներ և վոչ-մետաղներ: Ուրինակներ, վորոնք ցույց են տալիս մետաղների և վոչ մետաղների տարբերությունը ֆիզիկական և քիմիական հատկությունների տեսակետից:

Տարրերը մետաղների և վոչ մետաղների ստորաբաժանելու հարաբերականությունը:

3. Ատոմներ և մոլեկուլներ: Ատոմական կշիռ: Մոլեկուլային կշիռ: Դրամ-ատոմ, գրամ-մոլեկուլ: Նյութի կշռի պահպանման և բաղադրության կայունության որենքներն ատոմա-մոլեկուլային ուսմունքի կապակցությամբ:

4. Եկվիվալենտ կշիռ: Դրամ-եկվիվալենտ: Վալենտականություն: Գաղափար փոփոխական վալենտականության մասին: Քիմիական ֆորմուլներ: Ելեմենտների վալենտականության վորոշումը նրանց պարզ միացությունների ֆորմուլներից: Պարզ ֆորմուլների կազմումը վալենտականության հիման վրա:

5. Քիմիական հավասարումներ: Դործակիցների ընտրությունը, յերբ տրված են վոչ-բարդ ռեակցիաների սկզբնական և վերջնական պրոդուկտները: Ինքնուրույն կերպով պարզ ռեակցիաների պարզ հավասարումների կազմելը (հիմքի չեղծացում թթվով, յերկու աղերի փոխադարձ տարրալուծում):

6. Հաշվարկումներ ֆորմուլների և հավասարումների հիման վրա: Կարողանալ ֆորմուլով հաշվել նյութի տոկոսային կազմը՝ տվյալ նյութի այն քանակը, վորն անհրաժեշտ և վորոշակի քանակությամբ այլ նյութ ստանալու համար. ինչքան և վերցվել տվյալ նյութից, յեթե ռեակցիայի ժամանակ ստացվել և մի այլ նյութ, տվյալ քանակությամբ:

7. Ջրածին: Նրա ստացումը: Ջրածնի հատկությունները և կիրառությունը: Ջրածինը վորպես վերականգնիչ: Ջուր: Ջրի բաղադրությունը: Ջրի անալիզը և սինթեզը: Նրա ֆիզիկական և քիմիական հատկությունները:

8. Լուծույթներ: Ընդհանուր պատկերացումներ ջրի մեջ գազերի, հեղուկների ու պինդ մարմինների լուծելիության մասին: Որինակներ գործնականում չլուծվող, քիչ լուծվող և լավ լուծվող նյութերի: Նոսրացված և վոչ հագեցած լուծույթի, կոնցենտրիկ և հագեցած լուծույթի հասկացողությունների տարբեր-

բությունը: Լուծույթների կոնցենտրացիան արտահայտելու յեղանակները՝ տոկոսային և մոլայար լուծույթներ: Կարծր և զաղային նյութերի լուծելիության կախումը ջերմաստիճանից: Կարծր նյութերի անջատումը լուծույթից: Գաղափար բյուրեղների մասին:

9. Թթվածին: Թթվածինը և ողոնը վորպես պարզ նյութեր: Թթվածնի ստացումը: Նրա հատկությունները: Թթվածինը վորպես ոքսիդացնող: Այրումը թթվածնի մեջ և ողում: Պարզ և բարդ նյութերի այրման պրոդուկտները: Այրման ռեակցիայի նշանակությունը արտադրության մեջ և հասկացողություն վառելանյութի մասին: Կարծր, հեղուկ և զաղային վառելանյութ: Որինակներ: Դանդաղ ոքսիդացում: Շնչառություն: Մետաղների ժանդոտումը:

10. Ոքսիդներ, հիմքեր, թթուներ, աղեր: Ոքսիդների գոյացումը, ելեմենտների և թթվածնի փոխերգործման ժամանակ: Ոքսիդների հիդրատները: Հիմքերը: Ալկալիներ: Թթվածնավոր և անթթվածնավոր թթուներ: Թթուների հիմնախուսթյունը: Որինակներ թվարկած տիպերի նյութերից: Հասկացողություն ինդիկատորների (լակմուս) մասին: Թթվի ֆորմուլից անհիդրիդի ֆորմուլի արտածումը և հակառակը: Հիմքեր և թթուներ ստանալու պարզ միջոցները:

11. Չեղոք և թթու աղեր: Մետաղների և աղերի թթվային մնացորդների վալենտականությունը:

Աղերի ստացման յեղանակները՝ չեղոքացում, տեղակալման ռեակցիա, փոխանակման ռեակցիա: Որինակներ:

12. Հալոգեններ: Քլոր: Քլորի ստացումը: Նրա հատկությունները և կիրառումը: Հասկացողություն թունավոր նյութերի մասին: Քլորային ջրածին և աղաթթու: Նրա ստացումը և հատկությունները: Աղաթթվի աղերի որինակներ: Բրոմի և յոդի հատկությունների համառոտ ակնարկ:

13. Մծումը: Նրա հատկությունները: Մծմբային գազ: Նրա առաջանալը ծծմբի այրման և եղչեղանների կիզման ժամանակ: Մծմբային թթուն վորպես վոչ-կայուն թթվի որինակ: Մծմբային զաղը ոքսիդացնելով ծծմբական անհիդրիդ դարձնելը: Մծմբական թթվի արտադրումը կոնտակտ յեղանակով: Հասկացողություն կատալիզի մասին: Մծմբական թթվի հատկությունները և նրա գործնական նշանակությունը: Մծմբաջրածին: Նրա ստացումը և հատկությունները: Աղերի որինակներ:

14. Ազոտ: Նրա հատկութիւնները: Ազոտն ոգում: Ողը վար-
պես գազերի խառնուրդ՝ թթվածնի, ազոտի, ածխածնի գազի
պարունակութիւնն ոգում (կտրացրած թթվում): Ամիակ: Նրա
ստացումը, հատկութիւնները: Ամոնիումի ոքսիդի հիդրատը:
Հասկացողութիւնն ամոնիումի աղերի մասին: Ազոտական թթու
և նրա աղերը: Ազոտական թթվի ստացումը, հատկութիւնները
և կիրառումը: Ուրինական նրա աղերից: Գաղափար պայթուցիկ
նյութերի մասին: Կապված ազոտի դերը բույսերի կյանքի հա-
մար: Ազոտային պարարտանյութեր:

15. Փոսփոր: Մպիտակ և կարմիր ֆոսփորի հատկութիւն-
ները: Փոսփորային անհիդրիդ: Ուրթֆոսփորական թթու և նրա
աղերը: Փոսփորային պարարտանյութեր:

16. Ածխածին: Ազամանդն ու գրաֆիտը վորպես ածխածնի
կերպարանափոխութիւններ: Փայտածուխ: Գազերի կլանումն
ածխի կողմից և նրա կիրառումը հակադազերի մեջ: Հանածո
ածուխները և նրանց տեխնիկական նշանակութիւնը: Ածխա-
թթու գազ: Նրա ստացումը և հատկութիւնները: Կիրառումը: Ած-
խածնի թթու: Ուրինական նրա աղերից: Ածխածնի ոքսիդ: Նրա հատ-
կութիւնները:

Մեթանը վորպես պարզ ածխաջրածին: Ամելի բարդ ածխա-
ջրածինների ուրինականը՝ եթան, եթիլեն, ացետիլեն, բենզոլ:

Նրանց ստրուկտուր ֆորմուլները և ֆիզիկական հատկու-
թիւնները:

Նավթը և նրա վերամշակման հիմնական պրոդուկտները՝
բենզին, կերոսին, քսէլու յուղեր: Գաղափար սպիրտների մասին:
Եթիլ սպիրտի ստրուկտուրը և ֆիզիկական հատկութիւնները:
Նրան հետևողականորեն ոքսիդացնելով ալդեհիդ և թթու դարձ-
նելու սխեման: Քացախածխի ֆիզիկական հատկութիւնները:
Նրա փոխադրեցութիւնը հիմքերի և եթիլային սպիրտի հետ:
Հասկացողութիւնն պարզ և բարդ եթիրների և ոճառի մասին
(առանց ֆորմուլների):

17. Սիլիցիում: Սիլիկահող և սիլիկատթու: Գաղափար
բնական սիլիկատների մասին: Ապակի:

18. Պարբերական որենքն ըստ Մենդելեևի ձևակերպման:
Մենդելեևի պարբերական սխեման: Պարբերութիւններ և խմբ-
եր: Մետաղների և վոչ-մետաղների դասավորումը պարբերական
սխեմանում: Պարբերական որենքի նշանակութիւնը:

19. Արկալի մետաղներ. նատրիում և կալիում: Նրանց հատ-
կութիւնները: Մոզա և պոտաշ: Կերակրի աղը բնութիւնն մեջ:
Կալիումական պարարտանյութեր:

20. Կալցիում: Նրա հատկութիւնները: Բնական կրաքարեր:
Ջրի կոշտութիւնը և նրա նշանակութիւնը տեխնիկայի համար:
Կրաքարի այրում: Չհանգած և հանգած կիր:

21. Ալյումինիւմ: Հասկացողութիւնն ալյումոսիլիկատների
մասին: Կավ: Գաղափար ալյումինիւմի արտահալման պրոցեսի
մասին: Նրա հատկութիւնները և տեխնիկական նշանակութիւնը:

22. Յերկաթ: Նրա հատկութիւնները: Յերկաթի ոքսիդ-
ները: Յերկաթի հիմնական հանքերը: Հասկացողութիւնն դոմնա-
յին պրոցեսի մասին: Թուջ և պողպատ: Նրանց հատկութիւն-
ների տարբերութիւնը: Նրանց նշանակութիւնը ԽՍՀՄ-ի ին-
դուստրացման մեջ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ ՖԻԶԻԿՈ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա Շ Խ Ա Ր Հ Ի Կ Ո Ղ Մ Ե Ր Ը

Աշխարհի կողմերի վորոշումն արևի, աստղերի, ժամացույցի և կողմնացույցի միջոցով:

Յերկրի պտակերացումը գործուի յեվ Բարսեղի վրա

Գարտեղ և հատակագիծ: Մասշտաբ: Հեռավորությունների չափումը հատակագծի վրա:

Տեղի հատակագիծը: Տեղագրական քարտեղ:

Յերկրի մակերևվույթի ձևը

Հարթավայրեր (դաշտավայրեր, բարձրություններ), բլուրներ, լեռներ: Ցամաքի բացարձակ և հարաբերական բարձրությունը: Ռելյեֆի պատկերացման յեղանակները քարտեղի վրա:

Գլխավոր դաշտավայրերը, բարձրավանդակները, բարձրությունները և լեռները:

Յերկրի ձևը յեվ օարժումը

1. Յերկրի ձևը: Յերկրի գնդաձևության ապացույցները: Յերկրի սեղմվածությունը բևեռներում:

2. Յերկրաճնդի մեծությունը:

3. Յերկրի պտույտն իր առանցքի շուրջը: Յերկրաճնդի առանցքը, բևեռները: Յերեկվա և գեղերվա փոփոխվելը (հերթափոխությունը):

4. Յերկրի տարեկան շարժումը: Յերկրի ռբրիտը: Յերկրի առանցքի թեքությունը ռբրիտի հարթության նկատմամբ:

Տարվա յեղանակների հերթափոխությունը: Ջերմային հինգ գոտիներ:

Բարսեղի աստիճանացումը յեվ նրա օարերը (Երեմիաները)

Ձուգահեռագծեր, միջորեականներ, սկզբնական միջորեական, հասարակած: Լայնության և յերկարության աստիճանի վորոշումը քարտեղի վրա: Գոտիական ժամանակը:

Լ Ի Ր Ո Ւ Շ Ե Ր Ա

1. Յերկրաճնդի կառուցվածքը: Յերկրի միջուկը, մագման, լիթոսֆերան, հիդրոսֆերան, ատմոսֆերան (տրոպոսֆերա, ստրատոսֆերա): Յերկրի կեղևը: Ապոններ:

2. Յերկրի մակերեվույթի փոփոխող ներքին ուժերը: Լեռնակաղմական պրոցեսներ: Լեռների կառուցվածքը: Ծալքեր և իջվածքներ: Հին և յերիտասարդ լեռներ (որինակներ):

3. Յերկրաշարժներ, նրանց պատճառները, սեյսմիկական շրջաններ:

4. Հրաբուխների առաջացումը: Հրաբուխների կառուցվածքը: Ժայթքման նյութերը: Հրաբուխների աշխարհագրական բաշխումը: Գեյզերներ և տաք աղբյուրներ: Գլխավոր հրաբուխներ: Յերկրի մակերեվույթի փոփոխությունն արտաքին ուժերի ազդեցության տակ:

Հ Ի Գ Ր Ո Ւ Շ Ե Ր Ա

1. Ստորերկրյա ջրերը և նրանց առաջացումը: Հասարակ և արտեզյան ջրհորներ, աղբյուրներ:

2. Հոսող ջրեր: Դեռակներ ու գետեր և նրանց առաջացումը:

Դեռային ավազաններ և ջրաբաշխներ: Դեռային հովիտներ, գեղատներ: Ջրվեժներ, սահանքներ: Դեռերի ոգտագործումը, վորպես հաղորդակցության ճանապարհներ, իբրև եներգիայի աղբյուրներ: Լճերը և նրանց անտեսական նշանակությունը:

Գլխավոր գետերը, ջրվեժները և լճերը:

Ա Շ Մ Ո Ւ Շ Ե Ր Ա

1. Ատմոսֆերայի բարձրությունը և կազմությունը: Յերկրի մակերեվույթի անհավասարաչափ տաքացումն արևի կողմից և բարեխառնության փոփոխությունները հասարակածից դեպի բևեռները:

2. Յամաքի և ջրի բաշխման ազդեցությունն ատմոսֆերայի ընդհանուր շրջանառության վրա: Փամիններ և նրանց ծագումը: Բրիզներ, մուսսոններ, պասսատներ:

3. Զրային գոլորշիներ ատմոսֆերայում: Անձրև, ձյուն, մեղ, կարկուտ, ցող, յեղյամ և նրանց ծագումը: Տեղումները բաշխումը յերկրագնդի մակերեսի վրա:

4. Կլիմա, կլիմայական գոտիներ և կլիմայի տիպեր:

Բ ն ա կ ա ն գ ո ս ի ն ե Ր

1. Կլիմայի, հողերի, բուսականության և կենդանական աշխարհի տեղաբաշխման որինաչափությունը:

2. Հասկացողություն աշխարհագրական լանդշաֆտի մասին: Լանդշաֆտային գոտիների բնութագիրը՝ բևեռային, տունդրային, տայգայի, խառն և սաղարթավոր անտառների, տափաստանների, անապատների, մերձարևադարձային և արևադարձային շրջանների:

3. Լանդշաֆտի փոփոխությունը՝ մարդու տնտեսական գործունեության ազդեցության տակ:

Բ Ն Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յերկրի բնակչության քանակը և խտությունը:
Ժողովրդների բաշխումն ըստ մայր ցամաքների:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՍԻՆ

1. ԽՈՐՀՐԴԻ ԲԱՊԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՆՔԸ

ԽՈՐՀՐԴ — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն: Միութենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները, առանձին միութենական հանրապետությունների մեջ մտնող ավտոնոմ հանրապետությունները և ավտոնոմ մարզերը:

2. ԽՈՐՀՐԴԻ ՖԻզԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐԽԱԳՐՈՒՅԱԼՆԸ

1. ԽՈՐՀՐԴ-ի տերիտորիայի մեծությունը: ԽՈՐՀՐԴ-ի ցամաքային և ծովային սահմանների բնութագրումը: Սահմանակից պետությունները: Բնաարարիչի ուղիղ ազդեցության ներքո գտնվող կողմից և Խորհրդային կառավարության կողմից աչք հափշտա-

կումը չճանաչելը: ԽՈՐՀՐԴ վոդոդոլ ծովերը՝ Սպիտակ, Բարենցի, Կարայի, Լապտևիների ծով, Արևելա-Սիբիրական, Չուկոտյան, Բերինգյան, Ուտոտյան, Ճապոնական, Սև, Ազովյան և Բալթիկ ծովերը:

Կղզիներ, թերակղզիներ, ծովախորշեր և նեղուցներ, պարանոցներ և ջրանցքներ:

ԽՈՐՀՐԴ-ի մակերեփույթի կազմությունը:

Կարևորագույն լեռնային սիստեմներ, բարձրություններ և դաշտավայրեր:

3. ԽՈՐՀՐԴ-ի բնական-արտադրական ուժերը: Ոգտակար հանածոները, եներգետիկ և հանքային ռեսուրսները և նրանց տեղաբաշխումը:

4. ԽՈՐՀՐԴ-ի ներքին ջրերը: Գետային ավազաններ, լճեր և ջրանցքներ: ԽՈՐՀՐԴ-ի յեվրոպական մասի (հյուսիսի և հարավի), Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Միջին Ասիայի, Կովկասի գետերի առանձնահատկությունները:

Զրային սիստեմի ոգտագործումը նավագնացության եներգետիկայի և վոդոգման համար:

5. ԽՈՐՀՐԴ-ի կլիմայի ընդհանուր բնութագիրը: Կլիմայի կոնտինենտալության ուժեղացումն արևմուտքից դեպի արևելք: Տեղումների բաշխումը: Խոնավ և չորային շրջաններ: Ղրիմի, Անդր-Կովկասի, Միջին Ասիայի և Պրիմորյեյի կլիմայական առանձնահատկությունները:

6. ԽՈՐՀՐԴ-ի հողային-բուսական զոնաները: Տունդրա, անապատառային, տայգա: Խառն և սաղարթավոր անտառներ, անապատառային, սևահողային և չորային տափաստաններ, մերձարևադարձային շրջաններ, անապատներ: Զոնաների սահմանները:

Յուրաքանչյուր զոնայի հողերի բնութագրումը:

Բուսական և կենդանական աշխարհի բնութագրումը: Տարբեր զոնաների կուլտուրական բույսերը: Հողերի և բուսականության հերթափոխությունը բարձր լեռնային շրջաններում (ուղղաձիգ գոտիականություն): Յուրաքանչյուր բնական զոնայի տնտեսական յուրացումը: Արդյունաբերական յուրացումը:

3. ԽՈՐՀՐԴԻ Բ ն ա կ չ ու թ յ ու ն ը

Միության բնակչության թիվը: ԽՈՐՀՐԴ-ի բնակչության բազմազգ կազմը: Բնակչության սոցիալական կազմը: Բնակչության համեմատաբար նախահեղափոխական մուսաւտանի և աչք

յերկրներէ հետ: Բնակչութեան խտութեանը և նրա բաշխումը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: Բնակչութեան բաշխման մեջ յեղած տեղաշարժերը: Գյուղական և քաղաքային բնակչութեանը: Քաղաքներէ աճը: Նոր քաղաքներ՝ Կիրովսկ, Ստալինգրադ, Մագնիտոգորսկ, Բերեզնիկի, Ստալինսկ, Իգարկա, Կոմսոմոլսկ-Ամուրի վրա:

2. ԽՍՀՄ-ի Տնտեսությունը

1. ԽՍՀՄ-ի սոցիալիստական արդյունաբերութեանը: Նրա զարգացման տեմպերը և բնույթը: Նոր արտադրութեաններէ յուրացումը: Համ Կ(բ) Կուսակցութեան 18-րդ համագումարի վորոշումը ժողովրդական տնտեսութեան աճի մասին—3-րդ Ստալինյան հնգամյակում: ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան ենթակառուցիչը: ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիան և ԳՈԵԼՐՈ-ի պլանը: Կարեւորագույն ելեկտրոկայանները, վորոնք աշխատում են ածուխի, տորֆի, ջրի ենթակայով: Արդյունաբերութեան հիմնական տեսակները և նրանց աշխարհագրական տեղաբաշխումը՝ մեքենաշինութեան, մետալուրգիայի, քիմիական, անտառային, տեքստիլ, սննդի արդյունաբերութեան (կարողանալ համեմատել այդ ճյուղերի վիճակը և տեղաբաշխումը ցարական Ռուսաստանում նրանց ունեցած վիճակի և տեղաբաշխման հետ):

2. ԽՍՀՄ-ի գյուղատնտեսութեանը: Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը ԽՍՀՄ-ում: Գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը և նրանց տեղաբաշխումը: Խորհրդային մերձարևադարձային շրջանները և նրանց կուլտուրաները: Անասնապահութեան տեսակները (ձկները) և շրջանները: Ձկնորսութեան և վորսի շրջանները: Անտառային տնտեսութեանը:

ԽՍՀՄ-ի տրանսպորտը: Գլխավոր յերկաթուղային գծերը և նրանց հիմնական բեռնափոխադրումները (բեռնահոսանքները): Գետային և ծովային տրանսպորտ, փոխադրվող բեռները, գլխավոր գետային և ծովային նավահանգիստները: Ավտո և ավիո-տրանսպորտ, նրանց նշանակութեանը և գլխավոր գծերը:

Բ. ԱՆԵԱՐԿ ԽՍՀՄ-ի ՌԱՅՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի Ռայոնացումը

Խորհրդային իշխանութեան ազգային քաղաքականութեանը և ազգային միութենական, ավտոնոմ հանրապետութեաններէ և ավտոնոմ մարզերի ստեղծումը:

Պլանային տնտեսութեանը և տնտեսական ռալոնացումը: ԽՍՀՄ-ի քաղաքական-վարչական բաժանումն ըստ Ստալինյան Սահմանադրութեան (կարողանալ քարտեզի վրա ցույց տալ միութենական և ինքնավար հանրապետութեանները, յերկրները, մարզերը, ավտոնոմ մարզերը և նրանց գլխավոր քաղաքները:

ՌԵՅՈՆ

Վոչ սեվախոդային կենտրոն

Դիրքը (տեղադրութեանը): Արեւելա-յեւրոպական հարթութեանում Ոկա և Վոլգա գետերի միջև: Բնական պայմանները: Վաղ արդյունաբերական զարգացման պատմական պատճառները: Մոսկվայի մարզը: Մարզի կենտրոնական դիրքը (տեղադրութեանը), Մոսկվայի պատմական նշանակութեանը: Բնական պայմանները: Տորֆ, ֆոսֆորներ, շինանյութեր:

Մոսկվայի մարզի արդյունաբերութեան նշանակութեանը ԽՍՀՄ-ի վորջ արդյունաբերութեան մեջ և իր մարզի տնտեսութեան մեջ: Գլխավոր ճյուղերը՝ մեքենաշինութեան, քիմիա և տեքստիլ: Նրանց տեղաբաշխումը: Մոսկվայի վորպես խորհրդային տրանսպորտային, արդյունաբերական և կուլտուրական կենտրոն: Մարզի գյուղատնտեսութեան բնույթը:

Տուրայի մարզ: Դիրքը (տեղադրութեանը): Բնական պայմանները: Մերձմոսկովյան ածուխը և յերկաթը: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերը: Տուրա: Ստալինոգորսկ: Կալուգա:

Իվանովոյի մարզ: Դիրքը (տեղադրութեանը): Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Արդյունաբերութեան գլխավոր ճյուղերը: Գյուղատնտեսութեանը, Իվանովո:

Յարոսլավլի մարզ: Դիրքը (տեղադրութեանը): Բնական պայմանները: Արդյունաբերութեան գլխավոր ճյուղերը (հին և նոր) և արդյունաբերական գլխավոր կենտրոնները—Յարոսլավլ, Ռիբինսկ և Կոստրոմա, Ռիբինսկի և Ուզլիչի հիդրոկայանները:

Ռյազանի մարզ: Դիրքը (տեղադրութեանը): Բնական պայմանները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Ռյազան:

Սեվախոդային կենտրոն

Դիրքը (տեղադրութեանը): Բնական պայմանները: Ոգտակար հանածոները, սեւահողային կենտրոնի «ուժասպառվելը» ցա-

բական Ռուսաստանի պայմաններում և այդ ուժասպառման պատճառները:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, գյուղատնտեսությունից սոցիալիստական վերակառուցումը, արդյունաբերության զարգացումը:

Տամբովի մարզ: Դիրքը (տեղադրությունը): Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Արդյունաբերության գլխավոր ճյուղերը: Տամբով:

Վորոնեժի մարզ: Դիրքը (տեղադրությունը): Արդյունաբերության գլխավոր ճյուղերը: Գյուղատնտեսությունը: Վորոնեժ: Լիպեցկ:

Պենզեի մարզ: Դիրքը: Տնտեսության գլխավոր ճյուղերը: Պենզա:

Կուրսկի մարզ: Դիրքը: Կուրսկի մազնիտային անոմալիան: Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Կուրսկ, Բելգորոդ, Ստարի Ոսկոլ:

Ուլովի մարզ: Դիրքը: Ոգտակար հանածոները: Արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Ուլյով, Բրյանսկ:

3. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի հյուսիս-արևմուտք

Դիրքը: Ատլանտյան ովկիանոսի մոտիկությունը և նրա ազդեցությունը կլիմայի վրա: Ծովային յեղքերը: Վոլգա-Բալթիական միացությունը: Լճերի առատությունը:

Լենինգրադի մարզ: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Լենինգրադի դիրքի առանձնահատկությունները: Արդյունաբերությունը Լենինգրադում կենտրոնացնելու պատճառները: Լենինգրադի արդյունաբերության կառուցվածքը: Լենինգրադը վորպես տրանսպորտային, արդյունաբերական և կուլտուրական կենտրոն: Արդյունաբերությունը Լենինգրադից դուրս: Ելեկտրակայանները: Գյուղատնտեսական զոնաները՝ մերձքաղաքային, վոլշի, անտառային:

Մալադի մարզ: Կոլա թերակղզու տունդրաները: Ոգտակար հանածոները: Լեռնարդյունահանման արդյունաբերությունը Կիրովսկում: Մուրմանսկը վորպես նավահանգիստ և ձկնորսության կենտրոն: Յեղջերվաբուծությունը տունդրայում:

Կալինինգրադի ՍԽՍՀ: Դրանիտի, լճերի և անտառների յերկիր: Անտառային տնտեսության և անտառաթղթի արդյունաբերու-

թյան զարգացումը: Զրային եներգիայի ոգտագործումը: Ընկեր Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկ ծովերի ջրանցքը և նրա նշանակությունը:

4. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի հյուսիս-արևմուտք

Դիրքը: Բնական պայմանները: Տալա և տունդրա: Ոսկալի, Հյուսիսային Դվինայի, Մեդենի և Պեչորայի ավազանները: Ծովը: Պեչորայի ածխային ավազանը:

Արխանգելսկի մարզ: Դիրքը: Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կղզիները: Անտառային տնտեսությունը և անտառային արդյունաբերությունը: Արդյունաբերության այլ ճյուղերը, գյուղատնտեսությունը, մորթու արտադրությունը, ձկնորսությունը և ծովային զաղանների վորսը Սառուցյալ ովկիանոսի ափերի և կղզիների վրա:

Յեղջերվաբուծությունը տունդրայում:

Նենեցների ազգային ոկրուգը: Արխանգելսկ:

Վալադդայի մարզ: Դիրքը: Յերկաթուղային մագիստրալները, վորոնք անցնում են մարզի միջով: Կաթնատնտեսությունը վորոգվող մարգագետինների վրա: Վալաբուծություն: Անտառային տնտեսությունը և անտառային արդյունաբերությունը: Վորոգա:

Կամ-ի ՍԽՍՀ: Դիրքը: Անտառները: Ոգտակար հանածոները: Բնակչությունը, նրա ազգային կազմը և տեղաբաշխումը: Գյուղատնտեսությունը և անտառային տնտեսությունը, նրանց տեղաբաշխումը: Վորսորդություն: Նավթի մշակությունը: Կուլտուրայի աճը: Սիկտիվկար:

5. Յեվրոպական մասի արևմուտք

Բնության, պատմության և տնտեսության ընդհանուր դժերը: Տեխնիկական կուլտուրաների և մթերատու-անասնապահության զարգացումը:

Սմոլենսկի մարզ: Դիրքը: Ոգտակար հանածոները: Տնտեսության գլխավոր ճյուղերը: Վալաբուծության և կաթնանասնապահության զարգացումը: Սմոլենսկ:

Կալինինի մարզ: Զբաղաչական դիրքը: Ոգտակար հանածոները: Արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Կալինին:

Ե. Մերձվողյան օրոյան

Կազմը: Դիրքը: Վոլգան և նրա նշանակութիւնը: Վոլգայի աջ ու ձախ ափերը: Անտառների, անտառատափաստանների և տափաստանների սահմանները Մերձվողյան սահմաններում:

Գործի մարզ: Դիրքը: Գորկի, նրա նպաստավոր դիրքը: Արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը: Խոշորագույն նորակառույցները: Գորկի:

Կիրովի մարզ: Դիրքը: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը: Տնայնագործական արդյունաբերութիւնը: Կիրովսկը:

Վոլգայի ձախ ափի աղգային ավտոնոմիաները (Մարիա-կան և Ուլմուրտական ԱԽՍՀ): Նրանց դիրքը: Անտառ և անտառային տնտեսութիւն: Արդյունաբերական կենտրոնները և գլխավոր քաղաքները՝ Իժմբսկ, Վոտկինսկ, Իոչկար-Ուլա:

Վոլգայի աջ ափի աղգային ավտոնոմիաները (Չուվաշական ԱԽՍՀ և Մորդովական ԱԽՍՀ): Դիրքը: Գյուղատնտեսութեան և անտառային տնտեսութեան առանձնահատկութիւնները:

Դլխավոր արդյունաբերական կենտրոնները և քաղաքները՝ Չեբոկսարի, Սարանսկ:

Թաթարական ԱԽՍՀ: Գետերի միջև ընկած յերեք մասերը՝ Վոլգայի աջափնյա և ձախափնյա, Կամայի ձախափնյա շրջանները: Կազանի դիրքի ոգտակարութիւնը և նրա արդյունաբերութիւնը: Կուլտուրայի աճը:

Կալմիկի մարզ: Դիրքը: Վոլգայի աջափնյա և ձախափնյա շրջանները: Սամարայի աղեղը և Ժիզուլյան լեռները: Կալմիկի շնչը ու նրա արդյունաբերութիւնը: Սիզդանն ու Նավթային արտադրութիւնը: Ուլյանովսկ: Հիդրոհանգույցի շինարարութիւնը (Կառուցումը):

Սառատովի մարզ: Դիրքը: Վոլգայի աջափնյա և ձախափնյա շրջանները: Ոգտակար հանածոները: Նորակառույցներ: Գյուղատնտեսութիւնը: Ջախափնյա շրջանների վտուղումը: Սարատովը և նրա արդյունաբերութիւնը: Վոլսկ:

Մերձվողյան գերմանացիների ԱԽՍՀ

Դիրքը: Վոլգայի աջ և ձախ ափերը: Բնակչութիւնը և նրա կուլտուրայի աճը: Նորակառույցներ: Ենդելս:

Սալինգրադի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Աղի արտադրութիւնը: Վոլգա-Արաուքին:

ակի վտուղումը (պոյմա): Գյուղատնտեսութիւնը: Ձկնա-տնտեսութիւնը: Վոլգայի գետային Նորակառույցներ:

Ստալինգրադը և նրա արդյունաբերութիւնը: Աստրախան:

Կալմիկական ԱԽՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Երգենիկներ: Բնակչութիւնն ու նրա կուլտուրական աճը: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Ձկնային տնտեսութիւնը: Անասնապահութիւնը: Ելիստա: Լազան:

Դ. ԽՍՀՄ-ի Յեկրայական մասի կարավը

Դիրքը: Բնական պայմանները:

Ռազովի մարզ: Դիրքը: Ազովյան ծովի ափին: Դոնը և նրա վտակները: Դոնի և Սալսկի տափաստանները: Դոնբասի արևելյան յերկրամասը: Արդյունաբերութիւնը: Գյուղատնտեսութիւնը: Ձկնորսական տնտեսութիւնը: Ռոստով: Տազանրոգ: Նովոչերկասկ:

Ղարմի ԱԽՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Տափաստանային և լեռնային Ղարմ: Ոգտակար հանածոները: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերը: Կուրորտները: Սիմֆերոպոլ, Սեվաստոպոլ, Յալտա, Կերչ:

Ե. Հյուսիսային Կովկաս

Դիրքը: Բնական պայմանները: Տնտեսութեան բնույթը: Բնակչութիւնը: Կուլտուրայի աճը:

Կրասնոդարի յերկիրը և Ադիգեյական ավստում մարզը: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերը:

Կրասնոդար, Մայկոպ, Տուապս, Սոչի:

Ուրսուիկիանի յերկիրը, Կաբարդայական և Չեչենական ավստում մարզերը: Դիրքը: Ոգտակար հանածոները: Արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերը: Վորոշիլովսկ, Պյատիգորսկ:

Կաբարդինո-Բալկարական ԱԽՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Նալչիկ:

Հյուսիսային Ոսերական ԱԽՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Ուրշուիկիան:

Չեչեն-ինգուռեական ԱնՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Գրգռի:

Դադասանի ԱնՍՀ: Դիրքը: Լեռնային մասը և Չեչենական հարթավայրը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Մախաչ-Կալա:

Չ. Ա լ Ր ա ի

Կազմը: Ուրալյան լեռնային յերկիրը և նրա հանածո հարստութիւնները: Լեռնագործարանային Ուրալի պատմական անցյալը:

Սվերդլովսկի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Սվերդլովսկ-Նիժնի Տագիլ:

Պերմի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Պերմ, Սոլիկամսկ, Բերեզնիկի:

Չելյաբինսկի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Չելյաբինսկ, Չլաստոուստ, Մագնիտոգորսկ:

Չկալովի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Ոգտակար հանածոները: Չկալով, Որսկ:

Բաեկիրական ԱնՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Կուլտուրայի աճը: Ուֆա, Իշիմբայեվո:

Սիբիրը յեվ Հեռավոր Արեւելքը

Դիրքը: Բնական պայմանները: Արեւմտյան Սիբիր: Արեւել-յան Սիբիր: Սիբիր և Հեռավոր Արեւելք: Սիբիրի յուրացումը ռուսների կողմից: Սիբիրական յերկաթուղագիծը և նրա նշանակութիւնը: Վերաբնակումը գեպի Սիբիր: Սիբիրը հեղափոխութիւնից առաջ և այժմ: Սիբիրի ռայոնացումը: Հյուսիսի ժողովրդների վերելքը:

Ոմսկի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Անտառային տնտեսութիւն: Ոմսկ, Տյումեն, Տոբոլսկ: Տնտեսական և կուլտուրական շինարարութիւնը մարզի հյուսիսում:

Նովոսիբիրսկի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: ՄԿԿ: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Նովոսիբիրսկ, Ստալինսկ, Կեմերովո:

Ալթայի յերկիր և Ոյրաքական ավսնում մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Ալթայան լեռների ջրային եներգիւն: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Բարնաուլ, Բիյսկ: Ոյրոթական ավտոնոմ մարզ:

Կրասնոյարսկի յերկիրը և Խակասական ավսնում մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Տնտեսութեան գլխավոր ճյուղերը: Տնտեսական և կուլտուրական շինարարութիւնը յերկրամասի հյուսիսում: Խակասական ավտոնոմ մարզ: Կրասնոյարսկ, Մինուսինսկ, Իզարկա:

Իրիւտսկի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերը: Ճանապարհները դեպի Յակուտիա և Մոնղոլիա:

Չիտայի մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Դյուղատնտեսութիւնը: Չիտա:

Բուրյատ-Մոնղոլական ԱնՍՀ: Դիրքը: Բնական պայմանները: Խիստ կլիման: Անտառները: Ոգտակար հանածոները: Վոսկի: Բնակչութիւնը: Ճանապարհները դեպի Յակուտիա: Տնտեսութեան բնորոշ առաձնահատկութիւնները: Կուլտուրայի աճը: Յակուտսկ:

Խաբարովսկի յերկիրը: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները և հումքային ռեսուրսները: Արտադրական ուժերի արագ աճը և նոր ընդարձակ տերիտորիաների յուրացումը: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը: Տրանսպորտային շինարարութիւնը: Բնակչութիւնը: Նրա ազգային կազմը: Կուլտուրայի աճը: Խաբարովսկ: Կոմսոմոլսկ: Կամչատկա: Սախալին (հյուսիսային մասը):

Պրիմորյեի յերկիրը: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները և հումքային ռեսուրսները: Արտադրական ուժերի հոսիւղ զարգացումը: Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը: Տրանսպորտային շինարարութիւնը: Նովահանգստային տնտեսութիւնը: Կուլտուրայի աճը: Վլադիվոստոկ:

Հրեական ավսնում մարզ: Դիրքը: Բնական պայմանները: Ոգտակար հանածոները: Հումքային ռեսուրսները: Արտադրողա-

կան ուժերի աճը: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Կուլտուրայի աճը: Բիրոբիջան:

Ուկրաինական ԽՍՀ

Դիրքը: Բնական պայմանները: Հողային բուսական զոնաները: Հանածո հարստությունների (ածխի և յերկաթի) զուգակցումը գյուղատնտեսության: համար բարենպաստ հողային-կլիմայական պայմանների հետ

Ուկրաինայի նշանակությունը քարածխի, թուջի, մեքենաների, աղի, ցորենի, շաքարի արտադրության մեջ: Ծանր արդյունաբերության զլխավոր ճյուղերը: Նրանց տեղարաշխումը: Դնեպրոգես: Դնեպրոկոմբինատ: ՈՒՍՏ գյուղատնտեսական մասնագիտացումը: Գյուղատնտեսական արդյունաբերությունը: Յերկաթուղային տրանսպորտը: Զրային տրանսպորտը: Ծովային նավահանգիստները: Ադմինիստրատիվ բաժանումը: Բնակչությունը: Ազգային կազմը: Կուլտուրայի աճը: Քաղաքները՝ Կիև, Պարկով, Ուեասա, Դնեպրոպետրովսկ, Զապորոժյե: ՈՒՍՏ առանձին մարզերը: Մոլդավական ԱՍՀ:

Բելոռուսական ԽՍՀ

Դիրքը: Բելոռուսիան Վորպես սոցիալիզմի ֆորպոստն արևմուտքում: Բնական պայմանները: Մեքենաշինություն: Փայտածալկման, թեթև արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության աճը: Գյուղատնտեսության զլխավոր ճյուղերը: Կուլտուրական շինարարությունը: Բելոռուսական ԽՍՀ-ի բաժանումը մարզերի: Գլխավոր քաղաքները՝ Մինսկ, Վիտեբսկ, Դոմել, Մոգիլև:

Անդրկովկասյան Միութենական ԽՍՀ-ի հանրապետություններ

Անդրկովկասի դիրքը և բնական պայմանները: Լեռնային ռելյեֆը: Ծովերը և նրանց ազդեցությունը կլիմայի վրա: Ուղղահայաց գոտեկանությունը: Անդրկովկասի հովիտների բացառիկ բարենպաստ կլիմայական պայմանները տաքություն սիրող կուլտուրաների համար: Լեռնային գետերի եներգիան: Ուղտակար հանածոները: Անդրկովկասի գաղութային անցյալը և Անդրկովկասյան միութենական հանրապետությունների ծաղկումը խորհրդային իշխանության ժամանակ:

Ազգաբնակչության խտության աշխարհագրական պատկերը և նրա ազգային կազմը:

Ադրբեջանական ԽՍՀ

Գուռ-Արաքսյան հարթավայրը: Մեծ և փոքր Կովկասի լեռնաճյուղերը և լանջերը: Բազմի նավթային արդյունաբերությունը և նրա նշանակությունը: Բամբակ: Այլ ճյուղերը: Կիրովբադ, Նախիջևանի ԱՍՀ, Նախիջևան, Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզ:

Հայկական ԽՍՀ

Դիրքի և բնական պայմանների առանձնահատկությունները: Արաքսի հովիտը և Յերևանյան հովիտը: Հայկական լեռնաստանը: Սեփանա լճի ջրային ռեսուրսները և նրա ոգտագործումը: Արդյունաբերության աճը: Գյուղատնտեսության առանձնահատկությունները: Յերեվան: Լենինական:

Վրացական ԽՍՀ

Վրաստանը Վորպես Անդրկովկասի հանրապետությունների մեջ ամենաբազմառեսակ բնություն և տնտեսություն ունեցող հանրապետություն: Արդյունաբերության աճը: Գյուղատնտեսությունը: Մերձարևադարձային շրջանները: Տրանսպորտ: Սեփովյան ափը, Աջարիա, Աբխազիա, Իմերեթիա, Կախեթիա, Հարավային Ոսեթիա, Թբիլիսի, Քութաիսի, Բաթումի, Սուխումի, Մտալինի:

Ղազախական ԽՍՀ

Դիրքը: Ալթայ, Ղազախական ծալքավոր յերկիր, Տյան-Շան լեռնաշղթան, հողակլիմայական պայմանները: Ուղտակար հանածոները: Արդյունաբերության աճը: Բնակչությունը: Կոչկետիվացումը և բնակչության քոչվորական վիճակից նստակյաց կյանքին անցնելը: Կուլտուրայի աճը:

Նոր յերկաթուղիներ և գործարաններ: Ղազախստանի հյուսիսի, կենտրոնական մասի և հարավի գյուղատնտեսությունը: Ալմա-Աթա, Կարազանդա, Սեմիպալատինսկ, Զիլքմենդ, Կուլնրադ: Ղազախական ԽՍՀ առանձին մարզերը:

Միջին Ասիայի միութենական ԽՍՀ-ի հանրապետություններ

Դիրքը: Ամու-Դարյա, Սիր-Դարյա, Վախշ և այլ գետերն ու նրանց նշանակությունը: Գյուղատնտեսության հիմնական լանդշաֆտներն ու տիպերը: Գյուղատնտեսության աճը: Գյուղատնտեսությունն ուղիներում: Գաղութային անցյալը:

Թ ա ռ Բ մ Ե ն ա կ ա ն Խ Ս Հ

Անապատների գերակշռումը: Կոպետ-Դագ: Ամու-Դարյա: Ուղիսներ: Ոգտակար հանածոներ: Բնակչությունը: Կուլտուրայի աճը: Տնտեսության գլխավոր ճյուղերը: Արդյունաբերությունը: Աշխարհը, Չարը:

Ուղբեկական ԽՍՀ Կարա-Կալպակական ԽՍՀ-ի հետ

Դիրքը: Նախալեռների համեմատաբար բարձր տեսակարար կշիռը: Գետեր և Ուղիսներ: Ֆերգանայի դաշտավայրը: Բնակչությունը:

Կուլտուրայի աճը: Բամբակագործությունը, բրնձը և դյուղատնտեսության այլ կուլտուրաները: Գլխավոր նորակառույցները: Կարա-Կալպակական Ա.Ս.Մ.Ն.:

Տաշկենտ, Սամարղանդ, Բուխարա, Ֆերգանա: Ուղբեկական ԽՍՀ-ի առանձին մարզերը:

Տ ա ջ ի կ ա կ ա ն Խ Ս Հ

Դիրքը: Լեռները և հովիտները: Բնակչությունը: Կուլտուրայի աճը: Տնտեսության գլխավոր ճյուղերը: Նորակառույցները: Ստալինաբադ, Լեռնային Բաղրաշանի ավտոնոմ մարզը:

Կ ի ր գ ի գ ա կ ա ն Խ Ս Հ

Դիրքը: Լեռները և հովիտները: Բնակչությունը: Կուլտուրայի աճը: Տնտեսության գլխավոր ճյուղերը: Փրունդե:

3. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիա յեվ Իռլանդիա

